Ոսկեպար, Կողբագետ, Հախում եւ այլ գետեր հոսում են Ադրբեջան, որտեղ ջրամբարներում կուտակվում է մեր գետերի ջուրը: Մինչդեռ Տավուշի մարզի 25 հազար 394 հեկտար վարելահողերից ոռոգվում է 3700 հեկտարը: 2017-ին Տավուշի մարզպետը հայտարարել էր, որ մարզում 14 փոքր եւ միջին ջրամբարների կառուցման ծրագիր կա:

Կարդացեք՝ էջ 4



Հայաստանի բնակչությունը 3 միլիոն է, դրսից ՀՀ ուղարկվող դրամական միջոցները մեկ շնչի հաշվով կազմում են 2 հազար դոլար, Ադրբեջանում՝ 117 դոլար: Հայաստան մեկ շնչի հաշվով 20 անգամ շատ փող է դրսից գալիս, քան՝ Ադրբեջան: Եվ դրա 70 տոկոսը գալիս է ոչ թե ժողովրդավարական, ազատական Եվրոպայից, այլ՝ Ռուսաստանից:

Կարդացեք՝ էջ 5

Այլեւս սխալվելու իրավունք չունենք: Մենք պիտի ազգովի ելնենք ազգային ազատագրական պայքարի: Դիպուկ է ասել Օմար Խայամը. «Եթե ազգը սիրահարված է իր դահճին, նախիրի պես կմորթվի»: Թող իմանան՝ թուրքը չի գալիս մեր գլուխը շոյելու: Սկզբում քեզ կխոնարհվի, կբծնի, կբարձրանա քո ուսերին, դու խելոք՝ գլուխդ կկտրի:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 74 (4209), 12 մայիս, երեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Արագածոտնի մարզպետարանը «Շինէքսպրտ» ՍՊԸ-ի հետ մանկապարտեզների շինարարության ընթացքի վերահսկման 5 պայմանագիր է կնքել: Դրանք կնքվել են նույն օրը՝ մայիսի 5-ին, առանց մրցույթի՝ մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով, ընդհանուր՝ մոտ 7 մլն դրամ արժեքով: «Շինէքսպրտ» ընկերությունը 2010-ին հիմնադրել է ճարտարապետ Սուրեն Աբովյանը, որը 2016-ից Վանաձոր քաղաքի գլխավոր ճարտարապետն է: Պաշտոնը ստանձնելուց մեկ տարի անց՝ 2017-ին, Աբովյանը դուրս է եկել «Շինէքսպրտ» ընկերության կառավարումից, ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը փոխանցել է ընկերության աշխատակիցներին, սակայն ընկերությունում առանց նրա իմացության ոչինչ տեղի չի ունենում: Այս ընկերությունը, հատկապես Փաշինյանի իշխանության օրոք, Վանաձորի քաղաքապետարանի պատվերով իրականացնում է մանկապարտեզների շինարարության հեղինակային հսկողությունը: Այժմ ընկերությունն ընդլայնել է աշխարհագրությունը եւ հսկողության ծառայություններ է մատուցում նաեւ Արագածոտնի մարզում: Նկատենք, որ մինչ նշված 5 խոշոր պայմանագրերի կնքումը, նախկինում մարզպետարանն այս ընկերության հետ որեւէ պայմանագիր չի կնքել: Սուրեն Աբովյանի ֆեյսբուքյան էջից պարզ դարձան նրա քաղաքական հայացքները: Նա ակտիվորեն կիսվում է ՔՊ-ական մարզպետ Արեն Մկրտչյանի ֆեյսբուքյան հրապարակումներով, այլ ՔՊ-ականների տեղադրած նյութերով: Նաեւ ակտիվ է՝ տարբեր գրառումների տակ ՔՊ-ին սատարող մեկնաբանություններ է գրում:



Մայիսի 10-ին ավարտվեց բուհերի ընդունելության հայտագրման գործընթացը: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս Հայաստանի ազգային ագրարային համալսարանում արձանագրվեց խայտառակ պատկեր: Արդեն 3 տարի է՝ ԿԳՄՍ նախարարն ու ռեկտոր Հրաչյա Զաքոյանն ասում են, թե փրկում են Ագրարային համալսարանը՝ գերակա ագրարային մասնագիտությունների համար բարձր կրթաթոշակ սահմանելով: Մինչդեռ դա չի օգնում. այս տարի ագրարայինի 14 գերակա մասնագիտությունների գծով դիմել է ընդամենը 68 դիմորդ՝ անցած տարվա 98-ի փոխարեն: Եթե հաշվի առնենք վերջին տարիների դառը փորձը, որ Ագրարայինի դիմորդների շուրջ 70-80 տոկոսը չի հաղթահարում ընդունելության նվազագույն շեմը, նորից արձանագրվելու է անմխիթար պատկեր՝ 15-20 ուսանող: Ի դեպ, այս վիճակն Ագրարայինում շարունակվում է՝ սկսած 2021-ից, երբ ռեկտորն էր Վարդան Ուռուտյանը, որի «լավագույն» ավանդույթները շարունակում է ներկայիս ռեկտոր Զաքոյանը:

Հնչ է բերում ՔՊն մեզ

Մեծ հաշվով, գործող իշխանություններին ձայն տվողները կայունություն, խաղաղություն, ապահովություն երազող մարդիկ են, նրանք, ովքեր վախենում են փոփոխություններից ու ցնցումներից, այսպես ասած՝ փորձած թանը չեն ուզում փոխել անփորձ մածունի հետ: Նման մարդկանց տրամաբանությունն ու դիրքորոշումը միանգամայն հասկանալի կլինեին եւ ընդունելի, եթե գործող իշխանությունը լիներ այդ կայունության, ապահովության, խաղաղության, անցնցում ապագայի երաշխավորը: Այնպես է ստացվել, որ այսօր ճիշտ հակառակն է՝ գործող իշխանությունը հենց անկայունության, անապահովության, ցնցումների, պատերազմների, ճգնաժամերի ու անհայտ ապագայի երաշխավորն է: Եկեք խաղաղ քննարկենք իրավիճակն ու ՔՊ-ի՝ մեզ բերելիք ապագան: ՔՊ-ի մնալը նշանակելու է նորանոր շանտաժներ Ադրբեջանի կողմից եւ պատերազմի վախով կամ հենց պատերազմներով՝ նորանոր զիջումներ կորզել: ՔՊ-ի մնալը նշանակում է Ռուսաստանի կողմից պատժամիջոցներ, որոնք կարող են արտահայտվել եւ գազի գնի բարձրացմամբ, եւ Ռուսաստանի 2 միլիոն հայերի դեպորտացիայով, եւ տնտեսական կապերի խզմամբ, իսկ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ մեր արտադրանքի ուղիղ կեսը գնում է Ռուսաստան, Հայաստան եկող փոխանցումների առյուծի բաժինը գալիս է Ռուսաստանից: ՔՊ-ի մնալը նշանակում է Հայ առաքելական եկեղեցու վրա հարձակումների նոր ալիք՝ նոր շրջիկ պատարագներ, եկեղեցում նոր տիրադավների ու կարգալույծների ի հայտ գալ, հոգեւորականների կալանավորումներ, դատապարտումներ: ՔՊ-ի մնալը նշանակում է, որ ցանկացած օր ՔՊ առաջնորդի դուրը կարող է չգալ ձեր կանգնելու կամ խոսելու ձեւը, եւ դուք կարող եք մի քանի րոպեում աշխատատեղից զրկվել: ՔՊ-ի մնալը նշանակում է այլախոհների հետապնդումներ, Բաքվում գերիների առկայություն, բիզնեսին ուղղված ոտնձգություններ:

Իշխանական աղբյուրներից տեղեկացանք, որ կիրակի օրը Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը Սյունիքից դժգոհ ու հիասթափված են եկել: Կապանում կայացած ամփոփիչ հանրահավաքի համար գործի էին դրվել մարզային ողջ իշխանությունը, վարչական ռեսուրսը, համայնքապետերը, վարչական ղեկավարները տիտանական աշխատանք էին կատարել՝ պարտադրել բոլոր պետական հիմնարկների աշխատողներին՝ ներկայանալ հանրահավաքին: Նաեւ կազմակերպել էին մարդկանց փոխադրումը բոլոր համայնքներից եւ ակնկալում էին, որ գոնե մի 10 հազար մարդ ներկա կգտնվի, սակայն, Դանիել Իոաննիսյանի հաշվարկով անգամ, ընդամենը 2 հազար 180 մարդ էր հավաքվել Կապանի հրապարակում՝ այն դեպքում, երբ միայն Կապանի բնակչությունը մոտ 46 հազար է: Փոխարենը, նույն Իոաննիսյանի հաշվարկներով, «Ուժեղ Հայաստանի» քարոզարշավի մեկնարկին՝ Մայր Հայաստան հուշարձանի մոտ, 5 հազար 650 մարդ էր ներկա գտնվել: Ընդ որում, պարզ է, որ իշխանությունների թիվն ուռճացված է, ընդդիմությանը՝ նվազեցված, եւ մարդկանց բերելու իշխանության ռեսուրսը քանիցս գերազանցում է ընդդիմության ռեսուրսին:

ՔԱՂԾԱՌԱՅՈՂՆԵՐՆ ԷԼ ԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ

Իշխող ուժի գործերն այնքան վատ են, որ, մեր տեղեկություններով, պետական գերատեսչություններում անգամ պետական ծառայողներին են պարտադրում մասնակցել քարոզչական աշխատանքներին: Երբեւէ քաղծառայողներին այս չափով չեն ներգրավել նախընտրական պրոցեսների մեջ, այս անգամ նույնիսկ նախընտրական շտաբների աշխատանքներին են ներգրավում: Ոմանց ստիպում են այցելել Երեւանի վարչական շրջաններ, շփվել բնակչության հետ, քարոզչություն անել ՔՊ-ի օգտին: Մինչդեռ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետն արգելում է «նախընտրական քարոզչություն կատարել եւ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաեւ՝ պետական եւ համայնքային ծառայողներին (բացառությամբ Ազգային ժողովի պատգամավորների), ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»: Պատմում են, որ ՔՊ-ի բուկլետները բաժանելու համար հատուկ գեղեցկադեմ արտաքինով աղջիկների են ընտրում, որ շատերը չմերժեն, սակայն, ասում են՝ դա էլ չի օգնում:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«ԿԱՆԱՉ» ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ԷԿՈՑԻԴԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մայիսի 11-ին Ամերիկյան համալսարանում հրավիրվել էր «Կանաչ օրակարգ Հայաստան» բնապահպանական թեմաներով համաժողով: Էկոցիդի կենտրոն Երեւանում այն ընկալվում է որպես նոնսենս:

Քանի որ այն կազմակերպվել է Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Կանաչ օրակարգ Հայաստան» ծրագրի շրջանակներում, հյուրերի ընտրությունն էլ եվրոպական «թեքում» ուներ՝ ԵՄ տարբեր ծրագրերի ներկայացուցիչներ,

փորձագետներ, ոլորտային միջին պաշտոնյաներ, շրջակա միջավայրի պահպանության եւ էկոնոմիկայի նախարարությունների, Ջրային կոմիտեի ներկայացուցիչներ: Հարցերը տարբեր էին եւ գլոբալ՝ կլիմա, էներգետիկա, ջուր, սննդային համակարգ, կենսաբազմազանություն, աղտոտվածություն, թափոններ եւ այլն: Այս գլոբալ թեմաների շուրջ ելույթները տեղի էին ունենում մի երկրում, որտեղ պետությունը համատարած ծառերի սպանդ է իրականացնում թե՛ մայրաքաղաքում, թե՛ մարզերում, հետեւողականորեն սպանվում է էկոբազմազանությունը, աղտոտվում են օդն ու ջուրը, գազանաբար ոչնչացվում է միակ եւ ունիկալ լիճը՝ Սեւանը, մի երկրում, որտեղ չկա բնապահպանական մշակույթ:

Այս ամենի մասին սույն «կանաչ» համաժողովի շրջանակներում ոչ մի խոսք չեղավ: Տարբեր ծրագրերի ուղեցույցների մասնագիտական քննարկում էր ընթանում, պաշտոնյաներն էլ COP 17-ին ընդառաջ ազգային առաջնահերթություններ էին ներկայացնում, որոնք հետաքրքրում են թերեւս միայն ելույթ ունեցողների «շեֆերին»: Լսելով ելույթները՝ տպավորություն ստեղծվեց, թե այս երկրում երբեւիցե որեւէ աշխատանք նախկինում չի արվել, ներկայիս գործերն էլ դեռ պլանավորման փուլում են: Օրինակ, Ջրային կոմիտեի նախագահի նախկին տեղակալ **Մարտիրոս Նալբանդյանը**, որը 4,5 տարի աշխատել է այդ հիմնարկում, այժմ պետական պաշտոնյա չէ, այլ՝ միջազգային ծրագրի մենեջեր եւ հրավիրված էր խոսելու ջրերի կառավարման մասին, ասում է. «Առաջընթաց կա, սահմանվել են ջրերի կառավարման հայեցակարգային մոտեցումները, նախանշվել են ուղղությունները, որոնք պետք է ներառված լինեն ապագա ռազմավարության մեջ: Երկիրը պետք է ունենա ոլորտային ռազմավարություններ եւ միասնական ջրային ոլորտի ռազմավարություն, բուն մշակումը պետք է իրականացվի բազմադոնոր ծրագրերով եւ պետք է իրականացվի Ջրային կոմիտեի կողմից՝ էներգետիկ, աղետների, կլիմայի կառավարման ռազմավարություններ եւ այլն: Դրա համար պետք է լինի ընդհանուր ռազմավարություն, որովհետեւ այս ռազմավարություններից մեկի ձախողումը կբերի շղթայական ռեակցիայով նաեւ մյուս ոլորտների տապալում»:

Նրան հարցրինք, թե ինչու է ջրային ոլորտի ռազմավարությունը նոր մշակվում՝ մի երկրում, որն ունի մոտ 60 եւ ավելի տոկոս ջրային ռեսուրսի կորուստ, նման ռազմավարությունը վաղուց պետք է մշակված լիներ, անգամ եթե որպես մեկնարկ ենք վերցնում 2018 թվականը:

«Եղել են նախկին ռազմավարություններ, բայց 18 թվից դադար է եղել: Խնդիրը եղել է՝ առանձին ոլորտների՞ ռազմավարություն լինի, թե՞ մեկ ընդհանուր, խմելու ջրի ռազմավարությունը՝ առանձին, ոռոգման ջրերինը՝ առանձի՞ն, թե՞ մեկ միասնական: Ի վերջո, եկել ենք եզրակացության, որ մեկ ռազմավարություն լինի, եւ ջրային ոլորտներում բոլոր մոտեցումները, առաջնահերթությունները, գործողությունները դրանով կարգավորվեն: Դրա հայեցակարգը կա մշակված, եւ դա, կարծում եմ, հիմք կհանդիսանա՝ ռազմավարությունը մշակելու»,- ասաց նա:

Հարցրինք Սեւանի մասին. տեղեկություն հրապարակվեց, որ կրկին իջել է ջրի մակարդակը՝ 10 սանտիմետրով, չնայած անձրեւներ եղան, եւ անընդհատ ասում են, որ պետք է Սեւանից ջրառը կարգավորվի՝ նվազեցվի: Ո՞րն է պատճառը, որ չի արվում: Փորձագետը պատասխանում է՝ չի կարող նշել մեկ պատճառ: «Լճի մակարդակի իջնելը կամ բարձրանալը 1-2 պատճառով չէ: Եթե պայմանական դիտարկենք ոռոգումը, այո, դա, իհարկե, պատճառ է, բայց երկրաբանական, կլիմայական կոմպլեքս գնահատում պետք է լինի: Այս տարի, այո, անձրեւներ եղան, անցյալ տարի մենք քիչ ենք բաց թողել այս տարվա համեմատ, բայց, միեւնույն է, էական տարբերություն կա: Այստեղ ավելի կոմպլեքս պատճառներ պետք է նայել»,- ասաց նա: Մ. Նալբանդյանին հարցրինք, թե ճի՞շտ է, որ ապօրինաբար ու չհաշվառված ջուր է բաց թողնվում ՀԷԿ-երի համար՝ էներգետիկ նպատակներով: «Սեւանից ջուրը մեկ կետով է բաց թողնվում, եւ այդ կետի պատկերը բոլորի համար պարզ է: Ոռոգման սեզոնից դուրս կանալը, որով ջուրը բաց է թողնվում, չոր է ու դատարկ: Այսինքն, խոսել ՀԷԿ-երի մասին՝ աբսուրդ է: Խոսքը Սեւան-Հրազդան կասկադի ՀԷԿ-երի մասին է, որոնք կանալի վրա են աշխատում: Բայց որոնք Հրազդան գետի բնական ելքով են աշխատում, սա այլ հարց է»,- ասաց նա:

Մի խոսքով, սա համաժողով էր՝ ձախողված ծրագրերի մասին, որոնց վերջնաժամկետը պահպանելն անգամ բարդ խնդիր է: «Սեւանա լճի շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագրի ներկայացուցիչ Նիլս Թեւսն իր ելույթում խոսեց CEPA-ի՝ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում իրականացված աշխատանքների մասին: EU4Sevan ծրագիրը Եվրոպական Միության եւ Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության համատեղ ֆինանսավորմամբ իրականացվում է 2021-ից: Մեկնարկը տրվել էր այն ժամանակվա շրջակա միջավայրի նախարար Ռոմանոս Պետրոսյանի, ԵՄ եւ Գերմանիայի դեսպանի մասնակցությամբ: Ծրագիրը CEPA-ի ուղեցույցներով է իրականացվում եւ մի քանի նպատակ ունի՝ Սեւանի ավազանում ներդրվում են ջրի որակի մոնիտորինգի համակարգեր, փորձարկվում են կեղտաջրերի մաքրման կայաններ, ֆերմերներին սովորեցնում են քիչ պարարտանյութ օգտագործել եւ այլն: Բայց արի ու տես, այն շատ դանդաղ է իրականացվում: EU4Sevan ծրագրի ներկայացուցիչ Նիլս Թեւսի ելույթը դրա ապացույցն էր: Նա նշեց. «Մեծ մասամբ մեր պարտավորությունները կատարել ենք, ունենք լավ առաջընթաց, բայց նաեւ որոշակի խնդիրներ՝ ֆինանսական բնույթի, մոնիտորինգի, այլ մեխանիզմների անբավար լինելու հետեւանքով»: Նա հերթով անդրադարձավ CEPA-ի տարբեր դիրեկտիվներին (ուղեցույցներին՝ Ս. Ս.): Նշեց, որ, օրինակ, նիտրիտների դիրեկտիվի գծով՝ Սեւանի ջրերը գյուղատնտեսական գործունեության հետեւանքով առաջացած աղտոտումից պաշտպանելու աշխատանքների ավարտի վերջնաժամկետը մարտի 1-ն էր, սակայն առայժմ ունենք միայն գործողությունների ճանապարհային քարտեզ:

Կեղտաջրերի մաքրման գծով նոր սկսում են իրավական բացերի ուսումնասիրությունը՝ հասկանալու, թե արդյոք անհրաժեշտ կլինի՞ ջրային նոր օրենսդրություն, թե՞ ոչ: Նոր՝ բայց անցել է արդեն 5 տարի: Անգամ հայտնի չէ, թե կեղտաջրերի կառավարումը որքան ֆինանսական միջոցներ է պահանջելու: Հեղեղումների բացասական հետեւանքները մարդկանց, շրջակա միջավայրի եւ տնտեսության վրա նվազեցնելու գծով CEPA-ի միակ առարկայական արդյունքն այն է, որ մշակվել է կառավարման պլան՝ Դեբեդ գետի համար: Հայաստանը պարտավորվել է իր ջրային օրենսդրությունը մոտարկել ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվին: Սա նշանակում է, որ երկրի բոլոր 6 ջրավազանային տարածքների համար պետք է մշակվեն եւ հաստատվեն կառավարման պլաններ: Ե՞րբ՝ երբ որ աքլորը կանչի՞: Այս ամենը դեռ երկար տարիների աշխատանք է պահանջելու: Պարոն Նիլս Թեւսի ելույթն ապացուցում է, որ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ CEPA-ի շուրջ ավելի շատ աղմուկ կա, քան՝ ռեալ աշխատանք: Սակայն հենց CEPA-ն է ընկալվում որպես Հայաստան-ԵՄ գործընկերության ճանապարհային քարտեզ եւ վերջին իրադարձությունների բերումով փաստացի հակադրվում է ԵԱՏՄ-ին:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՊԱՐԵԼՈՒ ԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԻՐԱՐ ՀԵՏ ՔՈՉԱՐԻ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը, որը ստեղծել են Ամերիկայում տեւական ժամանակ ապրած Արթուր Բրադերզը՝ Արթուր եւ Արտակ Սարգսյան եղբայրները, քարոզարշավը դեռ չի սկսել: Այս մասին «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց **Արման Սարգսյանը**, որը կուսակցության ցուցակում 5-րդ համարն է եւ մամուլի հետ շփումների պատասխանատուն:

«Մեր կուսակցության համար հիմնադրամ թույլ չէին տալիս բացել, մենք պատրաստվում էինք նույնիսկ դատարան դիմել, որ հետաձգեն քարոզարշավը, բայց վերջին պահին ասացին, որ բացվել են մեր հաշիվները, այդ պատճառով մի քանի օր հետ ընկանք: Մոտակա 2 օրվա ընթացքում մենք սկսելու ենք քարոզարշավը»,- ասաց Սարգսյանը: Նա նշեց, որ ոչ ստանդարտ քարոզարշավ են իրականացնելու. «Քարոզարշավ իրականացնելու ենք եւ բակային, եւ մարզեր ենք այցեր իրականացնելու, եւ՛ համացանցն ու նորագույն տեխնոլոգիաներն ենք օգտագործելու: Բայց թե ինչպիսին է լինելու քարոզարշավը, կանենք՝ կտեսնեք»:

Անդրադառնալով հարցին, թե արդյոք բավարար ֆինանսական միջոցներ կա՞ն քարոզարշավի համար, չե՞ն պատրաստվում դրամահավաք իրականացնել, ինչպես մի շարք ուժեր, պատգամավորի թեկնածուն նշեց. «Այս պահին մեր հիմնադրամի հաշիվները զրո են, քանի որ դա կապված է իմ նշած խնդրի հետ: Հայտարարվող դրամահավաքները կոռուպցիայի սխեմաներ են, փող են լվանում: Մեր գումարը պակասություն չի անի, բայց եկեք չասեմ թվերով: Փողեր չենք լվանալու, որ էդպես լիներ, հիմա մեզ վաղուց փակել էին»: Ա. Սարգսյանը մտավախություն չունի, որ իրենց ուժը կարող է ձայներ փոշիացնել. «Էդ որ ասում են՝ ձայներ ենք փոշիացնելու, էդ ո՞ր հարցումների արդյունքներով են նման եզրակացություն արել, ամեն մեկն իրենց կայքում կարող են քցել, ասել՝ մեզ քվեարկեք, բայց «Քոչարիին» մի քվեարկեք, էդպես մենք էլ կարող ենք անել: Հունիսի 7-ին մենք՝ բոլորս, կտեսնենք, որ «Քոչարի» կուսակցությունը սյուրպրիզով հանդես կգա: Պարելու ենք բոլորս իրար հետ քոչարի՝ Հանրապետության հրապարակում»:

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը խորհրդարանական ընտրություններին մասնակցում է 9 համարի ներքո: Նրանց կարգախոսն է՝ «Ազգային այլընտրանք կա՛»: Կուսակցությունը ԿԸՀ է ներկայացրել 88 թեկնածուից բաղկացած ցուցակ: Թեկնածուներից 4-ի գրանցումը մերժվել է:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Ծառուկյանն անմեղ է, Առուստամյանի մասով էլ վաղեմությունն անցել է

Հակակոռուպցիոն դատարանը մարտի 11-ին հրապարակեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի եւ նրա բիզնես կայսրության՝ «Մուլտի գրուպի» տնօրեն Սեդրակ Առուստամյանի գործով վերդիկտը: Ըստ այդմ՝ ընտրակաշառքի գործով ԲՀԿ առաջնորդն անմեղ ճանաչվեց: Նույն գործով անցնող Սեդրակ Առուստամյանը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 154.2 հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքի կատարման համար (թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը):

Վերդիկտից ուղիղ 2 ամիս անց՝ մայիսի 11-ին, Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Արամ Գրիգորյանի նախագահությամբ) հրապարակեց Ծառուկյանի եւ Առուստամյանի դատավճիռը: Գագիկ Ծառուկյանի պաշտպան **Էմին Խաչատրյանը** մեզ ասաց՝ ինչպես վերդիկտով էր, դատավճռով եւս հռչակվեց Գագիկ Ծառուկյանի անմեղությունը, Առուստամյանի մեղավորությունը, բայց վերջինիս նկատմամբ պատիժ չկիրառվեց, քանի որ այս գործի վաղեմության ժամկետն անցել է: Պաշտպանի խոսքով՝ բազմիցս հնարավորություն են ունեցել դիմելու վաղեմության ժամկետ կիրառելու համար, սակայն Ծառուկյանը ցանկացել է մինչեւ վերջ գնալ, որպեսզի դատական ակտով հրապարակվի իր անմեղությունը: Պաշտպանը նշեց՝ դատարանի որոշումը կողմերը կարող են բողոքարկել Հակակոռուպցիոն դատարանում, ըստ ամենայնի, դատախազությունն այդպես էլ կանի:

Այս գործը, հիշեցնենք, դատարանում է 2023 թվականից: Մեղադրանքի հիմքում 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցության օգտին 90 միլիոն դրամ ընտրակաշառք բաժանելու փաստն է դրվել: 2020 թվականի հունիսին, նույն օրը, երբ Ծառուկյանին մեղադրանք էր առաջադրվել, Փաշինյանն ասել էր. «Քննվում է երրորդ հանրապետության պատմության ամենակարեւոր գործերից մեկը, որովհետեւ, ի վերջո, ժողովրդի կամքի վրա բռնանալու համակարգված ինստիտուտ է բացահայտվում»: Իրավապահները քրեական գործի մասին հայտարարել էին Փաշինյանի հայտարարությունից հետո: Այդ ժամանակ Ծառուկյանը պահանջում էր կառավարության եւ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Ապա Ծառուկյանին ԱԱԾ-ն կանչել էր հարցաքննության եւ կալանավորել: Մեկուկես ամիս անց նա ազատ արձակվեց, 26-ի մայիսի 11-ին արդարացվեց:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԼՐԱՏՎԱԿԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՆ՝ ՋՈՒՐ ԵՆ ՇՊՈՒՄ ՄԵԶ ՎՐԱ ՈՒ ԻՐԵՆՔ ԷԼ ՆԿԱՐՈՒՄ

*Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր **Էդգար Հակոբյանի** հետ*

- Դուք ՔՊ ցուցակի հետին հորիզոնականներում եք, Ձեզ անտեսված չե՞ք զգում, որ հայտնվել եք վերջերում, եւ Նիկոլ Փաշինյանն էլ առաջին հիսունյակի հետ է քարոզարշավ անում:

- Չենք նեղվում, անտեսված էլ չենք զգում, դա վարչության որոշումն է, նորմալ է, բոլորս էլ հնարավորություն ունենք քարոզարշավ անելու:

- Այս փաստը չի՞ նշանակում, որ ՔՊ-ն նախկին ընտրությունների պես իրականում այլեւս չի հավակնում մեծ արդյունքների, եւ առաջին հիսուն համարներն են լավագույն դեպքում անցնելու խորհրդարան:

- Չէ, նման բան չի կարող լինել: Ժողովրդի հետ շփվելուց հասկանում ենք, որ շատ լավ ա ժողովրդի տրամադրությունը, եւ ՔՊ-ն բարձր տոկոսներով է անցնելու:

- Կապանում Սյունիքի մարզի կտրվածքով ամփոփիչ հանրահավաքին Կապանում, ձեր համակիր ՀԿ-ի հաշվարկով, ընդամենը 2 հազար մարդ էր մասնակցում, այն էլ՝ վարչական ռեսուրսի կիրառմամբ: Դրանից բացի տեսնում ենք, թե ժողովուրդն ինչպես է ձեզ ընդունում՝ ջուր են լցնում ձեզ վրա, դուռ են փակում Փաշինյանի երեսին, մնացածի մասին չասենք:

- Ես չեմ ուզում էդ հաշվարկը մեկնաբանեմ, որովհետեւ, երբ մենք տեսնում ենք՝ շատ մարդ է գալիս, մնացածի հետ գործ չունեմ: Իսկ ջուր լցնելը, տեսեք՝ Մասիվում ամբողջ քարոզարշավի ընթացքում, օրինակի համար, 30 հազար բնակչություն ունեցող հատվածում մարդը շրջում է, ու կարա մեկը լինի, որ մի հատ վատ արարք թույլ տա կամ ջուր շփի: Դա ոնց կարամ նորմալ որակեմ, ու մարդիկ շատ անգամ ինադու... ես դեպքեր գիտեմ, լրատվականներ, որ շատ անգամ նման բաներ են կազմակերպում եւ շփում, եւ իրենք էլ նկարում են, որ ցույց տան:

- Լրատվականի ներկայացուցիչն էր ջրի տեսարանը կազմակերպել, ինչ շահ ունեն, որ նման բաներ կազմակերպեն:

- Այո, լրատվականների մեծ մասը փողով աշխատում են ինչ-որ կուսակցությունների համար, դա բոլորը գիտեն:

- Փաշինյանի «լայվերից» տասնյակ նման բողոքի տեսարաններ ենք տեսել, որ ձեզ մերժում են:

- Ես չէի ասի՝ մարդիկ մեզ լավ ընդունում են, տեսնում են՝ մենք ինչ լավ աշխատանքներ ենք կատարել, դրական փոփոխություններ կան, ու հաստատ ուզում են, որ մենք ընտրվենք, ամեն ինչը շարունակվի: Դպրոցները, մանկապարտեզները, առողջապահության ապահովագրությունը, էնքան բան ենք արել, որ թվարկենք, չի վերջանա:

- Որպես իշխող ուժի ներկայացուցիչ՝ անհանգստացած չե՞ք օրեր առաջ ՌԴ նախագահի արած հայտարարությամբ, որ Երեւանը պետք է հնարավորինս շուտ հստակեցնի իր դիրքորոշումը՝ Եվրամիությանը կամ ԵԱՏՄ-ին անդամակցության հարցում, որպեսզի քաղաքակիրթ ապահարզան լինի: Տեսնում ենք, որ գործող իշխանությունը ոչ միայն չի հստակեցնում, այլեւ հակառուսական տրամադրություններ է այստեղ գեներացնում:

- Մենք բոլորի հետ մեր հարաբերություններն այն մակարդակի վրա ենք պահում, որ մտահոգվելու կարիք չկա, քանի որ էդ հարաբերությունները դրականի մեջ պահելու շարունակական բնույթ է կրում, մնացածը՝ կարան լինեն երկրներ, երկրների ղեկավարներ, որ մեր երկրից հայտարարություններ արած լինեն, ես դրանց գնահատական չեմ ուզում տալ:

- Խոսքը միայն ԵՄ գագաթնաժողովի ընթացքում հնչած հակառուսական հայտարարությունների մասին չէ, այլեւ ձեր՝ իշխանականներից արած հայտարարությունների:

- Մենք հակառուսական, հակաեվրոպական... ընտենց երկիր չկա, որ հակա ինչ-որ բան ենք անում, նման տրամադրվածություն չունենք: Մենք չենք սպառնացել Ռուսաստանին, դա է կարեւորը, հիմա տարբեր երկրների ղեկավարներ տարբեր բաներ կարող են ասել իրար մասին, մենք ինչ կապ ունենք, 50 երկրի ղեկավար էր եկել այստեղ, հիմա պիտի նայեինք՝ ով ում հետ ինչ հարաբերություն ունի:

- Լավ, հիմա փաստ է, որ մեզ ընտրության առաջ են կանգնեցնում, ինչ պետք է անի իշխանությունը, եթե արդեն ՌԴ-ից սանկցիաներ կան մեր գործարարների նկատմամբ, մտավախություն չունե՞ք, որ ավելի վտանգավոր քայլեր կլինեն, եթե շարունակենք:

- Մենք շարունակում ենք հարաբերությունները բոլորի հետ, մնացածը՝ թե ով կընտրի, ինչ կընտրի՝ կարծում եմ, էդ հարցն իրենց մասով է, մեզ չի վերաբերում: Մենք բոլորի հետ լավ հարաբերություն ենք պահում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻՆՉԵՎ 2020 Թ. ԱՌԱՋԱՐԿՎԵԼ Է ՀԱՆՁՆԵԼ 5 ՇՐՋԱՆ՝ ԱՌԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Կապանում՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մի շարք ուշագրավ հայտարարություններ է արել. «2021-ին մեզնից ակնկալում էին մեր տարածքով անցնել, մեզնից ակնկալում էին միջանցք: Էս «միջանցք» բառը, ընդ որում, շատ դրական իմաստ ունի. բոլորը փորձում են գտնել, կառուցել տրանսպորտային միջանցքներ: Ամբողջ դժբախտությունն ու վտանգն այն էր, որ մեզնից ակնկալում էին ոչ էդպիսի տրանսպորտային միջանցք: Մեզնից պահանջում էին միջանցք, որը, օրինակ, ցանցերով փակված եւ առանձնացված կլինի ամբողջ երկայնքով, ենթադրենք՝ երկաթուղու, եւ առանձնացված կլինի Հայաստանի Հանրապետության մյուս տարածքից: Մեզնից պահանջում, ակնկալում էին միջանցք, որի ամբողջ երկայնքով երրորդ երկրի զինվորներ շարված կլինեին: Դե, անվանապես կարող էր շարունակվել համարվել Հայաստանի Հանրապետություն, բայց դե՝ բոլորս էլ հասկանում ենք դրա իրական էությունը: Այսօր, հինգ տարի անց, մենք չենք խոսում միջանցքի մասին, մենք ունենք ապաշրջափակում: Ընդ որում, բոլոր ենթակառուցվածքները շարունակվելու են մնալ մեր ինքնիշխանության, իրավազորության ներքո: Եվ խոսք չկա որեւէ երրորդ երկրի զինվորների կամ այլ անվտանգային վերահսկողության մասին: Եթե ձեզ որեւէ մեկն ասի, թե միջանցք կա, դա բացարձակապես սուտ է: Այսպիսի հայտարարությունը գրոշի արժեք ունենալ չի կարող»: Բացի այդ, նա նաեւ ասել է, որ մեր վերահսկողության տակ դեռ ադրբեջանական տարածքներ կան, ինչպես Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայկական տարածքներ:

Քաղաքագետ **Ստեփան Դանիելյանին** հարցրինք՝ ինչ է նշանակում Միրզոյանի այս հայտարարությունը, դրանով նա ինչ մեսիջ է հղում: Նա ասաց. «Այս հայտարարությունը պետք է նախընտրական գործընթացի առումով դիտարկել: Հայաստանի իշխող ռեժիմը հասկանում է, որ ընտրություններից հետո պետք է բազմաթիվ հարցերի պատասխանեն, նաեւ՝ թե ինչ ստվերային պայմանավորվածություն ունեն, որոնց մասին հանրությունը տեղյակ չէ: Պարզ ասած, հիմիկվանից փորձում են իրենց համար ալիբի ստեղծել: Պարզ չէ, թե ինչու են 2021-ից խոսում: Մինչեւ 2020-ը իրենց առաջարկվել է ընդամենը հանձնել 5 շրջան՝ առանց պատերազմի, դիմացը՝ միջազգային իրավունքով խաղաղապահներ տեղակայվեն Արցախում, իսկ Սյունիքի ճանապարհը բացվի՝ ռուսական վերահսկողությամբ՝ առանց ցանկապատների: Իրենք հրաժարվել են ու իրենց «կետից» սկսել բանակցությունները: Հետո եղել է պատերազմ, մենք պարտվել ենք, եւ դիմացը նորից պայմանավորվել են (20 թվականի հայտարարության 9-րդ կետը) բացել ճանապարհը՝ ռուսական վերահսկողությամբ, առանց ցանկապատների: Դրանից նույնպես հրաժարվել են, որի արդյունքում փակվել է Լաչինի միջանցքը, եւ Արցախն էթնիկ զտման է ենթարկվել: Դրանից հետո արդեն «Զանգեզուրի միջանցքի» պահանջ է դրվել՝ կապիտուլյացիայի ենթարկված Հայաստանի առաջ: Արդյունքում Սյունիքի ճանապարհի վերահսկողությունը հանձնել են միջազգային կորպորացիայի՝ ԱՄՆ վերահսկողությամբ, եւ, ըստ այդ պայմանների, մաքսատները գտնվելու են Ադրբեջանի տարածքում, բեռները վերահսկվելու են արհեստական բանականության միջոցով, առանց հայ մաքսավորների ու սահմանապահների կենդանի վերահսկողության: Այս ամենն անելուց հետո փորձում են առասպելներ հնարել՝ այդ ամենն արդարացնելու համար, նաեւ հասկանում են, որ այս ամենն արդեն փաստագրված կարող է բացահայտվել հանրության առաջ, հանրության այն հատվածի, որն ունակ չէ այս ամենը տեսնել ու վերլուծել: Ընտրությունների արդյունքում այդ պահը մոտենում է: Եթե անգամ անօրինական ինչ-որ եղանակներով կարողանան ժամանակավորապես իշխանությունը պահել, դա կարճատեւ իշխանություն է լինելու: Օրինական ու արդար ընտրություններով իրենք չեն կարող վերարտադրվել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՒՇԻՄԱՅՈՒՄ

ՊՈՒՏԻՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԷՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՈՐՈՇԻ, ԹԵ ԻՐԵՆ ՈՐՏԵՂ Է ՏԵՍՆՈՒՄ

«Եվրամիությանը միանալու Հայաստանի ծրագրերը «հատուկ դիտարկում են պահանջում»»,- օրերս հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

«Մենք մեկ անգամ չէ, որ քննարկել ենք դա վարչապետ Փաշինյանի հետ եւ առանձնահատուկ ոչինչ չենք տեսնում: Իրականում, եւ

նա կհաստատի, ես նրան արդեն մի քանի անգամ ասել եմ եւ այժմ կարող եմ հրապարակայնորեն կրկնել՝ մենք կսատարենք այն ամենը, ինչը շահավետ է հայ ժողովրդին»,- Կրեմլի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ շաբաթ օրը լրագրողների հարցերին ի պատասխան ասել է Պուտինը եւ շեշտել. «Հայ ժողովրդի հետ մենք հատուկ հարաբերություններ ունենք դարեր շարունակ: Եվ եթե հայ ժողովրդին շահավետ է այս կամ այն որոշումը, խնդրեմ, մենք դեմ չենք լինի»:

Միաժամանակ, ՌԴ նախագահը մատնանշել է որոշ հանգամանքներ, որոնք, ըստ նրա, կարեւոր են թե իրենց եւ թե գործընկերների համար. «Օրինակ՝ Հայաստանի հետ մեր ապրանքաշրջանառությունն այժմ նվազել է: Անցած տարի, նախանցած տարի շատ ավելին էր, բայց, այնուամենայնիվ, 7 միլիարդ դոլար 2025 թվականին: Եթե հաշվի առնենք, որ երկրի ՀՆԱ-ն 29 միլիարդ է, դա լուրջ մեծություն է, եւ Հայաստանը նշանակալի առավելություններ է ստանում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում»: Դա, ըստ Պուտինի, վերաբերում է գյուղատնտեսությանը, վերամշակող արդյունաբերությանը, հարկերին, ինչպես նաեւ՝ միգրացիոն ոլորտին: «Եվ, իմ կարծիքով, ճիշտ կլիներ թե՛ Հայաստանի բնակչության, քաղաքացիների նկատմամբ, թե՛ մեր՝ որպես տնտեսական գլխավոր գործընկերոջ նկատմամբ, հնարավորիս շուտ կողմնորոշվել, օրինակ՝ հանրաքվե անցկացնել: Դա մեր գործը չէ, բայց սկզբունքորեն տրամաբանական կլիներ հանրաքվե անցկացնել եւ հարցնել Հայաստանի քաղաքացիներին՝ ինչպիսի՞ն կլինի նրանց ընտրությունը: Դրան համապատասխան էլ մենք եւս համապատասխան եզրակացություններ կանեինք եւ կգնայինք փափուկ, ինտելիգենտ եւ փոխշահավետ ապահարզանի ճանապարհով»,- հայտարարել է Ռուսաստանի նախագահը՝ ըստ էության, Նիկոլ Փաշինյանին ժամանակ տալով, որ մինչեւ առաջիկա ԵԱՏՄ գագաթնաժողովը (մինչեւ մայիսի 28-ը) որոշում կայացնի: Երեկ հայտնի դարձավ, որ այդ գագաթնաժողովին մեկնելու է ոչ թե Նիկոլ Փաշինյանը, այլ՝ Միհեր Գրիգորյանը:

Նախորդ շաբաթ Հայաստան-Եվրամիություն առաջին գագաթնաժողովը սրել է հայ-ռուսական հարաբերությունները: Այն ամբողջությամբ անցավ հակառուսականության մթնոլորտում, սակայն վարչապետ Նիկոլ Փաշինյանը նաեւ չհստակեցրեց՝ Երեւանը պատրաստվո՞ւմ է ԵՄ-ին անդամակցության հայտ ներկայացնել, թե՞ ոչ, ինչ-որ անորոշ հայտարարություններ արվեցին: «Եթե մեզ կընդունեն Եվրոպական Միության անդամ, մենք ուրախ եւ երջանիկ կլինենք դրա համար, եթե մեզ չեն ընդունի Եվրոպական Միության անդամ, բոլոր դեպքերում, մենք կլինենք շահած դիրքերում, որովհետեւ Հայաստանի Հանրապետությունը կլինի եվրոպական ստանդարտներին համապատասխանող երկիր՝ դրանից բխող բոլոր դրական արդյունքներով»,- հայտարարեց Փաշինյանը:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ **Արամ Սարգսյանը**, մեզ հետ զրույցում խոսելով Վլադիմիր Պուտինի վերոնշյալ հայտարարությունների մասին, ասում է. «Հայտարարությունը շատ պարզ է: Պուտինի խոսքով՝ այն, ինչ անում է Նիկոլ Փաշինյանը, չի կարող տեղավորվել այն քաղաքական տրամաբանության մեջ, որը գոյություն ունի: Պուտինը հստակ ասաց՝ կամ ԵԱՏՄ, կամ ԵՄ: Ի վերջո, Հայաստանն ասում է՝ երբ ցանկանանք, այն ժամանակ էլ ապահարզանի կդիմենք, իսկ Պուտինը պատասխանում է, որ դա Հայաստանի ուզելով չէ, որ երբ Հայաստանը ցանկանա, այն ժամանակ պրոցեսը կյանքի կոչվի: Ռուսաստանն ասում է, որ ինքը կգնա այդ քայլին: Եթե հունիսի 7-ի ընտրությունների արդյունքում նոր իշխանություն ձեւավորվի, լրիվ այլ իրավիճակ կլինի, բայց եթե հանկարծ այսօրվա իշխանությունը վերարտադրվի, դա նշանակում է, որ Ռուսաստանն իրապես ապահարզանի է գնալու: Թե ինչ է լինելու, դա բոլորը հասկանում են: ԵԱՏՄ-ից դուրս գալով՝ Հայաստանը զրկվում է բոլոր առկա հնարավորություններից, եւ խնդիրն այն է, որ ԵԱՏՄ-ն փոխարինել ԵՄ-ով՝ բացառված բան է, զուտ այն պատճառով, որ ուղղակիորեն չկան նախադրյալներ, որ Հայաստանը միանգամից կարող է դառնալ ԵՄ անդամ, եւ, անկեղծ ասած, ես անգամ հեռանկարում չեմ տեսնում նման բան: Այնպես որ, Պուտինի հայտարարությունն ուղղված էր հայ ժողովրդին, եւ հայ ժողովուրդը պետք է հստակ որոշի, թե իր ապագան որտեղ է տեսնում: Մենք՝ ընդդիմադիրներս, շատ մեծ անելիք ունենք այս հարցում: Մեր ունեցած շփումները ցույց են տալիս, որ մարդիկ սիրում են փաստարկված խոսք լսել, ուստի պետք է հասարակությանը բացատրել, թե ինչ տեղի կունենա, եթե Հայաստանը դուրս գա ԵԱՏՄ-ից»:

Բայց իշխանությունները, գիտակցելով այս ամենի հետեւանքները, կգնա՞ն այս քայլին: «Իսկ ի՞նչը պետք է կաշկանդի իշխանություններին: Ինչքան վատ ժողովրդի համար՝ այնքան լավ Նիկոլի համար: Նրա վերջին օրերի ելույթները պարզապես կասկածի տեղ չեն թողնում, թե այդ մարդն ով է: Նա ուղիղ տեքստով ասաց, որ Ղարաբաղը երբեք մերը չի եղել, իսկ Ղարաբաղյան շարժումը սխալ է եղել: Նման մարդուց ի՞նչ լավ բան կարելի է սպասել: Նա բացառապես կարող է Հայաստանը կործանել, իսկ այս պարզ իրողությունը ովքեր չեն հասկանում, վատ է»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՏԱՊԱԼԵԼ ԵՆ

21-րդ դարում, կապված կլիմայի գլոբալ փոփոխությունների, անապատացման վտանգի հետ, քաղցրահամ ջրի, ջրային ռեսուրսների նշանակությունը մեծացել է: Սակայն Հայաստանում շարունակում են ջրային ռեսուրսների հանդեպ ոչ հաշվենկատ, անփույթ վերաբերմունքը: Հայաստանի գետերը հոսում են Ադրբեջան, Կասպից ծով, փոխանակ ամբարվեն Հայաստանի ջրամբարներում, դրանցով ոռոգվեն հազարավոր հեկտար հողեր:

Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված էր 2021-2026 թվականներին Հայաստանում կառուցել 15 փոքր եւ միջին ջրամբար: Սակայն այդ ջրամբարները չեն կառուցվել: Չկատարված խոստումներին ավելանում են նորերը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նախատեսում է մինչեւ 2033 թվականը 10 ջրամբարի կառուցում: Նիկոլ Փաշինյանը, ֆեյսբուքյան իր էջում ներկայացնելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը, հայտնել է, որ իրենք արդեն մի քանի փոքր ջրամբարի նախագծումն ավարտել են, եւ հավելել. «Առաջիկայում կսկսենք շինարարությունը, ի վերջո ավարտեցինք Վեդիի ջրամբարի կառուցումը, հիմա Վեդիի ջրամբարը ջրալցման պրոցեսի մեջ է»: Կապսի ջրամբարի շինարարությունն են ձախողել՝ դրա համար ներգրավվել է հսկայական ֆինանսական միջոց. 68.5 միլիոն եվրոյի վարկ է տրամադրել գերմանական KfW բանկը, եւս 26.7 միլիոն եվրո էլ՝ Հայաստանի կառավարությունը, սակայն չինական ընկերությունը ձախողել է այդ ջրամբարի կառուցումը: Հայաստանի համար գետերն ունեն նաեւ ռազմավարական նշանակություն, դրանց ջրերի մի մասն ամբարելը կբարձրացներ Հայաստանի՝ որպես պետության, նշանակությունն Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում:

Սահմանամերձ Տավուշի մարզում էլ է ակնառու Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին ջրամբարների շինարարության ոլորտում դրսեւորված անգործությունը: Ոսկեպար, Կողբագետ, Հախում եւ այլ գետեր հոսում են Ադրբեջան, որտեղ կառուցված ոռոգման ջրամբարներում էլ կուտակվում է մեր գետերի ջուրը: Մինչդեռ Տավուշի մարզի 25 հազար 394 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողերից ոռոգվող է շուրջ 3700 հեկտարը:

2017 թվականին Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը հայտարարեց, որ գոյություն ունի Տավուշի մարզում 14 փոքր եւ միջին ջրամբարների կառուցման ծրագիր: Դրանք հնարավորություն կտային կուտակել մինչեւ 10 միլիոն խորանարդ մետր ջուր, որի միջոցով ոռոգելի կդառնար 4 հազար հեկտար հողատարածք: Առաջնահերթ նախատեսվում էր կառուցել Հախումի եւ Կողբի ջրամբարները, դրանցում կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր: Նախատեսվում էր՝ փոքր եւ միջին ջրամբարների կառուցման համար ֆինանսական միջոցների խնդիրը լուծելու համար, ներգրավել մասնավոր ներդրողների: Նախատեսվում էր, որ կառուցվելիք ջրամբարները ոչ միայն կօգտագործվեին հողատարածքների, այգիների ոռոգման նպատակով, այլեւ կդառնային զբոսաշրջային վայրեր, ձկնաբուծության կենտրոններ: Սակայն այդ ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա, չիրականացվեցին:

Մեծ խնդիր են նաեւ գործող ջրամբարների տեխնիկական զննությունը, տեխնիկական սպասարկումը, դրանց հիդրոտեխնիկական կառույցների վերանորոգումը եւ վերազինումը: 44 միլիոն խորանարդ մետր տարողությամբ Ջողազի ջրամբարը կառուցվել է խորհրդային շրջանում՝ 1976-1980 թթ.: Այն փաստացի հանդիսանում է հայ-ադրբեջանական սահմանագիծ: 1990-ականների սկզբին այդ տարածքում մարտական գործողություններով պայմանավորված՝ սահմանագծում գտնվող ջրամբարի հիդրոտեխնիկական կառույցներում զննություն, նորոգումներ կատարելը խիստ վտանգավոր էր, ուստի չի արվել: Բերդ համայնքի տարածքում Հախումի, Ծիլի ծովի եւ Տավուշի ջրամբարները տեխնիկական վերազինման, վերանորոգման խիստ կարիք ունեն: Վերջին անգամ նշված ջրամբարներում այդ աշխատանքները կատարվել են 24 տարի առաջ՝ 2002 թվականին, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՆՏԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՆ՝ ՌԵՎԱՆՇԻՍՏ. ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՆ ՀԱՄԱՏԵՂՎԱԾ Է

Պարզվում է, Նիկոլ Փաշինյանի սպասարկու Արամ Սարգսյանը ռեւանշիստ է, նրա սիրտը եւ հոգին չեն համակերպվել պարտության հետ, եւ նա ուզում է, որ Հայաստանը նորից ուժերը չափի Ադրբեջանի հետ, միայն թե՝ ուժեղի դիրքերից, որ հետ բերի Արցախը, բայց՝ 10 տարի հետո: Իբրեւ թե 10 տարի հետո Հայաստանն այնքան ուժեղ կլինի, իսկ Ադրբեջանը՝ այնքան խեղճացած ու թուլացած, որ նույնիսկ խոսելու բան էլ չի լինի, Արամ Սարգսյանը կփչի, ու Ադրբեջանը փուլ կգա: Պատկերացնում եք, մարդ լինի կապիտուլյանտ Նիկոլ Փաշինյանի սպասարկու ու համատեղության կարգով՝ նաեւ ռեւանշիստ: Սրանք անհամատեղելի են, բայց ինչ հրաշքներ ասես, որ չեն լինում բնության մեջ, եւ Արամ Սարգսյանն այդ հրաշքներից մեկն է:

Նա մի հրապարակում է արել Ֆեյսբուքի իր էջում, որում նախ գովերգում է Փաշինյանի արտաքին քաղաքական հաջողությունները՝ Հայաստանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը, հիանում է Ֆրանսիայի եւ Բուլղարիայի հետ կնքված դատարկ եւ ոչինչ չասող փաստաթղթերով եւ դրանից հետո ասում է, որ պատերազմում պարտված Հայաստանի համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով ավելի բարձր է Ադրբեջանի ցուցանիշից: Իբրեւ թե դրա պատճառն էլ Հայաստանի ժողովրդավարական լինելն է, որ Հայաստանը խորացնում է իր ժողովրդավարությունը, իսկ Ադրբեջանը՝ ընդհակառակը՝ ավելի բռնապետական է դառնում: Հետո ներկայացնում է Ադրբեջանի տնտեսության ցուցանիշները, այդ թվում՝ արտահանման անկումը 21,7 տոկոսով, եւ այլ ցուցանիշներ ու եզրակացնում, որ այնպես, ինչպես Հայաստանի տնտեսությունը Ռոբերտ Քոչարյանի կառավարման պատճառով թուլացավ, եւ մենք կորցրինք Արցախը, «նույնը լինելու է նաեւ Ադրբեջանում, քանի որ այդ մոդելն այլ արդյունք ապահովել չի կարող»: Դրանից հետո էլ մի հեքիաթային կանխատեսում է անում. «10 տարի հետո ՀՀ-ն ունենալու է 80 մլրդ բյուջե, որը բացարձակ արժեքով մի քանի անգամ մեծ է լինելու Ադրբեջանի բյուջեից: Այս նշաձողին հասնելուց հետո է, որ Ադրբեջանի հետ խոսելու ենք լրիվ այլ դիրքերից, եթե, իհարկե, այդ ժամանակ Ադրբեջան պետություն լինի ու մասերի բաժանված չլինի»: Փաստորեն, Արամ Սարգսյանը խոստանում է 10 տարի հետո ոչ միայն Արցախը վերամիավորել Հայաստանին, հնարավոր է՝ մասնատված Ադրբեջանից էլ ինչ-որ կտորներ եւս: Իրականում, նա հասարակությանը կերակրում է կեղծ հեքիաթներով, որ իրեն ձայն տան Փաշինյանի կապիտուլյանտական քաղաքականությունից հիասթափված եւ ռեւանշիստական հեքիաթներով սնվող ու կշտացող ընտրողները: Դատելով ստացած 2,6 հազար հավանումներից՝ այդպիսիք, այնուամենայնիվ, կան:

Ադրբեջանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն իսկապես փոքր է Հայաստանի նույն ցուցանիշից, բայց այդ տարբերությունը շատ չնչին է, Հայաստանում այն դոլարային արտահայտությամբ մոտ 9,474 է, իսկ Ադրբեջանում՝ 7,365: Տարբերությունն ընդամենը 2 հազար 110 դոլար է: Պետք է նկատի ունենալ, որ սա անվանական ՀՆԱ-ն է, կա նաեւ իրական ՀՆԱ կամ գնողունակության համարժեքության ՀՆԱ, երբ ապրանքների եւ ծառայությունների գները հաշվարկվում են ոչ թե անվանական արժեքով, այլ՝ թե տվյալ երկրում նույն գումարով ինչքան ապրանք եւ ծառայություն կարելի է գնել: Պարզ ասած, հնարավոր է, որ Հայաստանում 100 դոլարով կարելի է գնել 10 միավոր ապրանք, իսկ Ադրբեջանում՝ 13 կամ 15, եւ քանի որ Ադրբեջանում շատ ապրանքներ, այդ թվում՝ էներգակիրները, անհամեմատ էժան են, քան Հայաստանում, հնարավոր է, որ Ադրբեջանի մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ն ավելի մեծ լինի, քան՝ Հայաստանինը: Բայց էականը սա էլ չէ:

Արամ Սարգսյանը, լինելով մեծ տնտեսագետ եւ խոշոր գեոպոլիտիկ, մտածում է, որ այդ 2 հազար 110 դոլարանոց տարբերության պատճառը Նիկոլ Փաշինյանի կառուցած ժողովրդավարությունն է, Հայաստանի եւ ԵՄ-ի հետ ջերմ հարաբերությունները, դե՝ նաեւ ինքն այդ հաջողության մեջ փայ ունի, որովհետեւ սպասարկում է Փաշինյանի քաղաքականությունը: Ուզում ենք հիասթափեցնել Արամ Սարգսյանին. այդ տարբերության միակ պատճառը եւ հեղինակը հայ մարդն է, այն էլ՝ դրսում աշխատող եւ Հայաստան փող ուղարկող հայ մարդը, հիմնականում՝ Ռուսաստանում աշխատող հայ մարդը: Համեմատեք, թե տարեկան որքան դրամական փոխանցում է եղել Հայաստան ու Ադրբեջան, եւ ամեն ինչ պարզ կլինի:

Այսպես. 2025 թվականին Ադրբեջան կատարված փոխանցումները կազմել են 1 միլիարդ 177 միլիոն դոլար, ինչը 8.7%-ով ավելի է, քան 2024 թվականին: Տրանսֆերտների ամենամեծ ծավալը՝ 479.3 միլիոն դոլար, ստացվել է Ռուսաստանից: 2025 թվականին Հայաստան կատարված դրամական փոխանցումների ծավալը եւս աճել է եւ տարվա կտրվածքով կազմել է 5.98 միլիարդ դոլար, որի մոտ 65%-ը ստացվել է Ռուսաստանից, 2025 թվականին Հայաստանը Ռուսաստանից ստացել է 3.9 միլիարդ դոլար: Մի հետաքրքիր փաստ եւս. դրամական միջոցների արտահոսքը կազմել է 4.3 միլիարդ դոլար, որից միայն 749.9 միլիոն դոլարը՝ Ռուսաստան: Ստացվում է, որ Ռուսաստանից ստացված դրամական միջոցների ահռելի մասը մեր երկրից տեղափոխվում է այլ երկրներ: Բայց սա այլ հարց է:

Եթե նկատի ունենանք, որ Հայաստանի բնակչությունը 3 միլիոն է, ստացվում է, որ դրսից Հայաստան ուղարկվող դրամական միջոցները մեկ շնչի հաշվով կազմում են 2 հազար դոլար, իսկ Ադրբեջանի բնակչությունն անցել է 10 միլիոնը, եւ այդ ցուցանիշով Ադրբեջանում մեկ շնչին ընկնող դրամական փոխանցումը կազմում է 117 դոլար, տարբերությունը՝ գրեթե 20 անգամ: Հայաստան մեկ շնչի հաշվով 20 անգամ ավելի շատ փող է դրսից գալիս, քան՝ Ադրբեջան: Եվ այդ գումարի մոտ 70 տոկոսը գալիս է ոչ թե իբրեւ թե ժողովրդավարական, ազատական Եվրոպայից, այլ՝ Ռուսաստանից:

Կարող է Հայաստանը 10 տարի հետո ունենալ 80 միլիարդանոց բյուջե, եթե Նիկոլ Փաշինյանը շարունակի բռնությամբ եւ կեղծիքով պահել իշխանություն, այլ տարբերակ ուղղակի հնարավոր չէ, իսկ Արամ Սարգսյանը շարունակի նրա մոտ սպասարկու աշխատել, իհարկե, ոչ: Ընդհակառակը՝ Հայաստանի բյուջեն կրկնակի, եթե ոչ ավելի, պակասելու է, որովհետեւ Ռուսաստանի իշխանություններն այլեւս մտադիր չեն հանդուրժել նման անարդարությունը, երբ Հայաստանը փող է աշխատում Ռուսաստանում եւ Ռուսաստանի հաշվին՝ այդ փողն ուղարկելով ԵՄ եւ այլ երկրներ, իսկ երկրի իշխանությունը Ռուսաստանը հռչակում է թշնամի եւ միանում Ռուսաստանի թշնամիների ճամբարին:

Ուզում եք իմանալ, թե ինչ կլինի Հայաստանի եւ Ադրբեջանի հետ 10 տարի հետո, եթե, աստված չանի՝ Փաշինյանը մնա իշխանության ղեկին, իսկ Արամ Սարգսյանը նրա մոտ սպասարկու աշխատի, համեմատեք 8 տարվա եւ այսօրվա Հայաստանը, եւ ամեն ինչ պարզ կլինի, առանց թվերի ու տոկոսների: Ադրբեջանի բնակչությունը վերջին 25 տարում ավելացել է 2,5 միլիոնով, Հայաստանինը տարեցտարի նվազում է՝ եւ իրական աճը, եւ արդյունքը:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՎԵՐՋՆԱԳՐԻՑ ԱՌԱՋ

Եթե Ալիեւի հարեմի գեղեցկուհիներից մեկը կանգներ եւ Սյունիքում հայտարարեր, թե «էդ ճիրը է Ղարաբաղը հայկական եղել, բա որ հայկական է եղել, ինչի՞ այնտեղ դպրոց ու մանկապարտեզ չեն կառուցել, գործարան չեն կառուցել, տուն չեն կառուցել», ես նրան, գուցե, մի գեղեցիկ բան կնվիրեի՝ որպես խիզախ կնոջ: Իսկ ի՞նչ անեմ, երբ նման արտահայտություն իրեն թույլ է տալիս ՀՀ վարչապետը՝ թող որ Ալիեւի առաջ չոքած, թող որ Պուտինից քշված, թող որ Եվրոպայից չարաչար խաբված: Հասկացանք՝ քարոզարշավ է, հասկացանք՝ ուզում ես Ալիեւին դուր գալ, հասկացանք՝ բացատրություն չունես, թե ինչու է այսօր Արցախը գերված ու հայաթափված, բայց մի՞թե հայ մարդը կարող է այնքան չսիրել Հայաստանն ու հայ ժողովրդին, որ հանուն մի աթոռի ուրանա ամեն բան աշխարհում: Այ տղա, Արցախում ամբողջական գյուղեր են կառուցվել, քաղաքներ են վերաշինվել, տասնյակներով դպրոցներ, մանկապարտեզներ ու հիվանդանոցներ են հիմնվել, համալսարան է գործել, գործարաններ ու ֆաբրիկաներ են շարք մտել, գյուղատնտեսություն է զարգացել: Արցախում այնքան ճանապարհ է կառուցվել, ու այնքան ասֆալտ արվել, որի կեսն անգամ չես տեսել: Արցախը հայկական պետություն է եղել ու կառուցվել գրեթե 0-ից… Եվ այս ամենը՝ հայ մարդու ձեռքով, հայկական կապիտալով, հայկական ներդրումներով: Դու, որ ոչինչ չես արել Արցախի համար, ինչպե՞ս ես քեզ թույլ տալիս ուրանալ Հայաստանի ու հայ ժողովրդի արածը, կրած զրկանքները, ամակ-աշխատանքը… Դու ո՞վ ես:

Անգամ 2021թ. ընտրություններից հետո դեռ կարելի էր հուսալ, որ Փաշինյանը կարող է ինչ-որ բան անել՝ պատերազմի հետեւանքները վերացնելու, Արցախը հետ բերելու, հայության իրավունքներն իր հայրենիքի նկատմամբ ամրապնդելու, պարտությունների շղթան ընդհատելու ուղղությամբ: Բոլոր հույսերը, սակայն, ի դերեւ ելան: Մեր ժողովուրդը Փաշինյանից ստացավ գաղափարական եւ խոսույթային ցնդաբանություններով համեմված նորանոր ստեր ու հարվածներ: Ժխտեց հայրենիքի գաղափարը, պղծեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, ուրացավ Հայոց ցեղասպանությունը, հայոց պատմությունը սեղմեց, դարձրեց Հայաստանի պատմություն, հայաթափեց Արցախը, որը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չէր եղել: Այսքան բանից հետո էլ ինձ նման միամիտը դեռ հույս ուներ, որ Փաշինյանի համար կարմիր գիծ, այնուամենայնիվ, կա, եւ նա չի համարձակվի գոնե այդ գիծը հատել: Բայց այն, ինչ տեղի ունեցավ քարոզարշավի օրերին Սյունիքում, այն հայտարարությունը, որ նա իրեն թույլ տվեց որպես Ալիեւի խամաճիկ, ինձ ստիպում է մտածել, որ նա այլեւս սահմաններ չունի, որ բացակայում է այն կետը, որից այնկողմ նա չի համարձակվի գնալ: Նա պատրաստ է ամեն ինչի, նա ոչնչացնում է հայի ինքնությունը, գենը, նա հողին է հավասարեցնում ամեն ինչ, որ կապված է հայկականության հետ: Սա, եթե ուրիշ բառեր էլ չգործածեմ, ամենահսկական ցեղասպանություն է… Թուրքի քայլ, թուրքի վարքագիծ, թուրքի երազանք:

Հունիսի 7-ին մենք հնարավորություն ունենք կանգնեցնելու Փաշինյանի այս խելագար ընթացքը՝ 16 համարի քվեաթերթիկը մտցնելով հենց իրենց համապատասխան տեղը: Ակն ընդ ական՝ եթե կուզեք, խոտորնակին՝ խոտորնակ, փողոցից եկածին՝ փողոց, պատահական անցորդին՝ բարի ճանապարհ… Մեր ջանին կպած այս նիկոլացավը պետք է թոթափենք վերջապես: Ու պետք չէ խաբվել նրա անպարտելիության առասպելին: Հետեւից գցած շունուշանգյալի ծափերը, որ հետեւում են նրա բարձրաձայնած ցնդաբանություններին, դեռ հիմք չեն մտածելու, որ մեր ժողովուրդը սիրում ու պաշտում է նրան: Ի վերջո, հասկանում ենք, որ խաղաղ պայմաններում հայրենիքից չեն հրաժարվում, ի վերջո, մեր բեյինը պետք է մտնի, որ Արցախից հետո նա հրաժարվելու է Սյունիքից, Հայաստանից ու մնացած ամեն ինչից, որ, ըստ նրա, ոչ թե Քարահունջ է, այլ՝ քարերի կույտ, որ ոչ թե տաճար է, այլ՝ գոմ ու չուլան, որ ոչ թե ժողովուրդ է, այլ՝ թուրքի թրից կախված մսի մնացորդ…

ՀԳ. *Թե բա՝ Պուտինը վերջնագիր է ներկայացրել Նիկոլին: Լռիրջ: Ուրեմն Պուտինն ավելի շատ պատճառներ ունի նրան վերջնագիր ներկայացնելու, քան մենք: Պուտինի համար Նիկոլը գոյաբանական խնդիր չէ, մեզ համար է գոյաբանական խնդիր, եւ հենց մենք պետք է իսկական վերջնագիրը ներկայացնենք նրան:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄԵՆՔ ՓՈՐՁԵԼՈՒ ԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԽՈՍԵԼ ՊԱՐԶ ԵՎ ԱԶՆԻՎ ԼԵԶՎՈՎ՝ ԱՌԱՆՑ ԿԵՂԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ

*«Հրապարակի» զրուցակիցը դիվանագետ, ԱԺԲ անդամ **Արա Պապյանն** է:*

- Մայիսի 8-ին պաշտոնապես մեկնարկեց հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրությունների քարոզարշավը: Մասնակից ուժերը ներկայացնում են իրենց նախընտրական ծրագիրը: Որո՞նք են ԱԺԲ-ի առանձնահատկությունը, թիրախը, լսարանը, որոնց առաջնություն եք տալու:

- ԱԺԲ-ի (ընտրաթերթիկում՝ № 8) առանձնահատկությունն այն է, որ մենք ընտրություններին մասնակցում ենք ոչ թե հերթական իշխանափոխության, այլ՝ պետականության վերականգնման օրակարգով: Այսօր քաղաքական դաշտում շատերը խոսում են միայն սոցիալական կամ տնտեսական առանձին խնդիրների մասին, մինչդեռ մենք ասում ենք՝ առանց ինքնիշխան պետության, անվտանգության եւ ազգային արժանապատվության վերականգնման, որեւէ սոցիալական խոստում երկար կյանք ունենալ չի կարող: Մեր հիմնական տարբերությունն այն է, որ մենք հստակ ձեւակերպել ենք Հայաստանի առջեւ կանգնած գլխավոր մարտահրավերը՝ պետականության եւ ինքնիշխանության ճգնաժամը: Մենք դեմ ենք պարտվողականության, անվերջ զիջումների եւ «խաղաղության» անվան տակ նոր պահանջների ընդունման քաղաքականությանը: ԱԺԲ-ն առաջարկում է արժանապատիվ եւ իրատեսական այլընտրանք՝ ուժեղ պետություն, ազգային շահերի վրա հիմնված արտաքին քաղաքականություն եւ անվտանգության նոր համակարգ: Ինչ վերաբերում է լսարանին, ապա մենք չենք սահմանափակվում որեւէ նեղ սոցիալական կամ տարիքային խմբով: Մեր հիմնական թիրախը Հայաստանի այն քաղաքացին է, որը հասկանում է, որ այս ընտրությունները պարզապես կուսակցությունների մրցակցություն չեն, այլ՝ Հայաստանի ապագայի ընտրություն: Մենք հատկապես ուշադրություն ենք դարձնելու երիտասարդությանը, որը ցանկանում է ապրել ոչ թե վախի եւ անորոշության, այլ արժանապատիվ եւ հեռանկար ունեցող երկրում, անվտանգության հարցերով մտահոգ քաղաքացիներին, պետականամետ եւ ազգային մտածողություն ունեցող մարդկանց, Արեւմուտքի հետ, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հետ սերտ ռազմաքաղաքական գործընկերության կողմնակիցներին, այն մեծ թվով հիասթափված քաղաքացիներին, որոնք այլեւս չեն հավատում հին քաղաքական համակարգին, բայց տեսնում են, որ ներկայիս իշխանությունն էլ երկիրը տանում է վտանգավոր ուղղությամբ, ինչպես նաեւ՝ այն ընտրողներին, որոնք չեն խաբվում նորելուկ ու ինքնահավան ուժերի խաբեպատիր խոստումներին: Մենք փորձելու ենք մարդկանց հետ խոսել պարզ եւ ազնիվ լեզվով՝ առանց կեղծ խոստումների: Չենք խոստանում հրաշքներ, բայց ասում ենք, որ հնարավոր է փոխել իրավիճակը, եթե Հայաստանը վերադառնա ազգային շահի, ինքնիշխանության եւ պատասխանատու պետական կառավարման ճանապարհին:

- Նիկոլ Փաշինյանն ու իր իշխանության տարբեր տրամաչափի գործիչներն առիթը բաց չեն թողնում՝ իրենց գլխավոր ընդդիմախոսներին անվանարկելու համար, հետապնդում են եւ այլն: Ձեր հանդեպ, կարծես, հատուկ ընդգծված քննադատական վերաբերմունք չկա, թերագնահատո՞ւմ են Ազգային ժողովրդական բեւեռի ներուժը:

- Դա միանգամայն սխալ պատկերացում է: Ընդհակառակը՝ ԱԺԲ-ն եղել եւ մնում է Հայաստանի քաղաքական դաշտի ամենահալածյալ ուժերից մեկը: Պարզապես իշխանության վերաբերմունքը մեր նկատմամբ հաճախ արտահայտվում է ոչ այնքան հրապարակային քննադատությամբ կամ հեգնանքով, որքան շատ ավելի գործնական եւ համակարգային ճնշումներով: Մեր բազմաթիվ կողմնակիցներ եւ համախոհներ տարբեր ժամանակներում ենթարկվել են հետապնդումների, զգալի մասը հայտնվել է բանտերում: Շատերի նկատմամբ անհիմն քաղաքացիական եւ քրեական գործեր են հարուցվել: Պետական համակարգում աշխատող մարդկանց սպառնացել են աշխատանքից ազատել, եթե կապ ունենան Բեւեռի հետ: Գործարարների նկատմամբ կիրառվել է հարկային եւ վարչական ճնշում: Մինչ այսօր էլ բազմաթիվ մարդիկ շարունակում են ենթարկվել քրեական հետապնդումների՝ բացառապես իրենց քաղաքական հայացքների եւ գործունեության համար: Բացի այդ, ԱԺԲ-ն տարիներ շարունակ ենթարկվել եւ շարունակում է ենթարկվել տեղեկատվական լիակատար շրջափակման: Իշխանության վերահսկողության կամ ազդեցության տակ գտնվող բազմաթիվ լրատվամիջոցներ անտեսում են մեր գործունեությունը, մեր օրակարգը, մեր նախաձեռնությունները: Սուտն ու զրպարտությունը մեր հասցեին մշտապես անպակաս են: Սա նույնպես քաղաքական հալածանքի ձեւ է՝ փորձել հանրությունից թաքցնել այն ուժին, որը ներկայացնում է այլընտրանքային ազգային եւ ինքնիշխանական օրակարգ: Այնպես որ, հակառակը՝ իշխանությունները շատ լավ հասկանում են, որ ԱԺԲ-ն գաղափարական ուժ է, որն ունի հստակ աշխարհայացք, կազմակերպված կորիզ եւ երկարաժամկետ քաղաքական նպատակներ: Եվ հենց դրա համար էլ փորձ է արվում մեզ մեկուսացնել, լռեցնել կամ թուլացնել:

- Այս իշխանությունների մեղքով Հայաստանը հայտնվել է խոր փոսի մեջ, անվտանգային սպառնալիքներ, հասարակության բեւեռացում: Օրերս Պուտինն առաջարկեց Հայաստանին՝ կողմնորոշվել, հանրաքվե անցկացնել ԵՄ եւ ԵԱՏՄ նախընտրության հարցով: ԱԺԲ-ն արտաքին քաղաքական ո՞ր կուրսի ջատագով է:

- ԱԺԲ-ն մշտապես եւ հետեւողականորեն հանդես է եկել Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի հետ հնարավորինս սերտ, կայուն եւ հարաճուն հարաբերություններ ունենալու օգտին: Մենք համոզված ենք, որ Հայաստանի անվտանգության, ինքնիշխանության եւ զարգացման համար անհրաժեշտ է ոչ թե մեկ կենտրոնից կախվածություն, այլ՝ իրական ռազմավարական գործընկերություն այն ուժերի հետ, որոնք շահագրգռված են տարածաշրջանում կայունությամբ, օրենքի գերակայությամբ եւ պետությունների ինքնիշխանության պահպանմամբ: ԱԺԲ-ն միակ քաղաքական ուժն է, որը ոչ միայն հայտարարությունների մակարդակով, այլեւ իր երկու նախորդ եւ ներկա ընտրական ծրագրերում հստակ ներառել է Հայաստանի համար ԱՄՆ-ի՝ ՆԱՏՕ-ի ոչ անդամ գլխավոր դաշնակցի՝ Major Non-NATO Ally (MNNA) կարգավիճակ ստանալու դրույթը: Սա պարզապես խորհրդանշական ձեւակերպում չէ, այլ՝ ռազմավարական ուղղություն, որը կարող է Հայաստանին տալ անվտանգության, ռազմական համագործակցության, տեխնոլոգիական զարգացման եւ քաղաքական աջակցության բոլորովին նոր մակարդակ: Մեր մոտեցումը հիմնված է պարզ իրողության վրա. վերջին տասնամյակների փորձը ցույց տվեց, որ Հայաստանի անվտանգության ամբողջական կապումը մեկ ուժային կենտրոնի հետ ոչ միայն չապահովեց անվտանգություն, այլեւ ստեղծեց վտանգավոր կախվածություն: Արդյունքում մենք ունեցանք եւ անվտանգային ճգնաժամ, եւ ինքնիշխանության սահմանափակում: Միեւնույն ժամանակ, ԱԺԲ-ն չի դիտարկում արտաքին քաղաքականությունը որպես «կամ-կամ»-ի պարզունակ ընտրություն: Մենք կողմ ենք հավասարակշռված, բայց հստակ ինքնիշխան շահերից բխող քաղաքականության: Հայաստանը պետք է հարաբերություններ ունենա բոլոր կարեւոր կենտրոնների հետ, սակայն այդ հարաբերությունները պետք է լինեն արժանապատիվ եւ փոխշահավետ, այլ ոչ թե ենթակայության կամ կախվածության ձեւաչափով: Ինչ վերաբերում է ԵՄ-ԵԱՏՄ հակադրությունը, ապա նախ պետք է հասկանալ, թե որն է Հայաստանի ազգային շահը: Մեզ համար առաջնայինը Հայաստանի անվտանգությունն է, ինքնիշխանությունը, տնտեսության զարգացումը եւ պետականության ամրապնդումը: Այդ տեսանկյունից ԱԺԲ-ն կարծում է, որ Հայաստանի Հանրապետության ռազմավարական ապագան ավելի բնականորեն կապված է ժողովրդավարական եւ տեխնոլոգիական զարգացած աշխարհի հետ:

- Օրերս Փաշինյանը կրկին հայտարարեց, թե Արցախը հայկական չէ, արցախցիների վերադարձի հարցը նա Հայաստանի համար համարում է վտանգավոր: Ինչ դիրքորոշում ունեք Արցախի, այդ թվում՝ նաեւ Բաքվում պահվող հայ բանտարկյալների հարցում:

- ԱԺԲ-ի բեւեռի համար Արցախի հարցը փակված չէ եւ չի կարող փակված համարվել որեւէ մեկի քաղաքական հայտարարությամբ: Արցախը մեզ համար ոչ միայն պատմական կամ զգացմունքային հարց է, այլեւ ՀՀ անվտանգության, իրավունքի եւ պետականության հարց: Այսօր պետք է հստակ հասկանալ, որ Ադրբեջանն իր քաղաքականությունն իրականացնում է երկարաժամկետ եւ համակարգված ռազմավարության հիման վրա: Ադրբեջանն իր արտաքին քաղաքականությունը խարսխում է իր սահմանադրության եւ մի շարք հիմնարար փաստաթղթերի, մասնավորապես՝ Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտի (1991 թ. հոկտեմբերի 18), ինչպես նաեւ՝ Ադրբեջանի Գերագույն խորհրդի Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին հռչակագրի (1991 թ. օգոստոսի 30) վրա, ըստ որոնց՝ իրեն հռչակում է Ադրբեջանի առաջին հանրապետության իրավահաջորդ: Այդ կեղծ պատմական, քաղաքական եւ իրավական հիմքերի վրա էլ կառուցում է իր ներկայիս պահանջները: Միաժամանակ Ադրբեջանը խորհրդային շրջանը ներկայացնում է որպես «օկուպացիայի շրջան» եւ, հետեւաբար, խորհրդային վարչական սահմանները չի համարում վերջնական, լեգիտիմ եւ օրինական հիմք: Նա երբեք չի ընդունել խորհրդային վարչատարածքային բաժանումը՝ որպես սահմանազատման կամ քաղաքական բանակցությունների վերջնական հիմք: Սա նշանակում է, որ, անկախ Հայաստանի ներկայիս իշխանությունների զիջողական քաղաքականությունից, մենք շարունակելու ենք բախվել Ադրբեջանի նոր տարածքային, քաղաքական, ֆինանսական եւ նույնիսկ բարոյահոգեբանական պահանջներին: Հետեւաբար, Հայաստանը պետք է պատրաստ լինի հակադարձելու Ադրբեջանին ոչ միայն ռազմական, այլեւ՝ քաղաքական, դիվանագիտական եւ իրավական դաշտերում: Նա պիտի պատրաստ լինի կիրառելու հակընդդեմ հայցեր եւ լայնորեն օգտագործելու միջազգային իրավունքի բոլոր միջոցները, ինչպես նաեւ՝ Միջին Արեւելքում ձեւավորվող նոր աշխարհակարգի ընձեռած բոլոր հնարավորությունները: Ցավոք, այսօր իշխանությունը հաճախ հրաժարվում է հենց այդ պայքարից՝ զիջումները ներկայացնելով որպես, այսպես կոչված, խաղաղության գին: ԱԺԲ-ն համոզված է, որ Արցախը Հայաստանի Հանրապետության մաս է՝ թե՛ իրավական, թե՛ պատմական, թե՛ արդարության առումներով, եւ Արցախի նկատմամբ հայկական իրավունքը չի վերանում որեւէ հայտարարությամբ կամ պարտադրանքով, կամ հայ բնակչությանը բռնագաղթի ենթարկելով: Արցախի հարցը պետք է լուծվի միջազգային իրավունքի հիման վրա՝ ՀՀ տարածքային ամբողջականության վերականգնման շրջանակում, արդարության հաստատումով, խաղաղ ճանապարհով, արժանապատիվ եւ սկզբունքային դիրքերից: Ինչ վերաբերում է Բաքվում պահվող հայ գերիներին ու բանտարկյալներին, ապա նրանց հարցը մեզ համար միայն մարդասիրական թեմա չէ: Դա ազգային արժանապատվության եւ պետական պատասխանատվության հարց է: Այս մարդիկ փաստացի քաղաքական պատանդներ են, եւ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է օգտագործել բոլոր հնարավոր միջազգային իրավական, դիվանագիտական եւ քաղաքական մեխանիզմները՝ նրանց ազատ արձակման համար: Անթույլատրելի է, երբ պետությունը փաստացի համակերպվում է իր քաղաքացիների կամ հայերի գերեվարման ու ստորացման հետ: Միեւնույն ժամանակ, մենք հստակ տարբերակում ենք անում արտաքին գերությունից ազատելու եւ հետագա իրավական պատասխանատվության հարցերի միջեւ: Եթե այդ մարդկանցից ոմանք կատարել են հանցագործություններ Հայաստանի Հանրապետության դեմ, ապա նրանք պետք է պատասխանատվության ենթարկվեն արդեն ՀՀ իրավազորության ներքո՝ օրենքի եւ արդար դատավարության սկզբունքների համաձայն, այլ ոչ թե մնան Ադրբեջանի բանտերում՝ որպես քաղաքական պատանդ եւ նվաստացման գործիք:

Արա ԱԼՈՅԱՆ

հարցազրույց

ԲՈԼՈՐ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ ՍՏԵՂԾԵՆ

Զրուցակիցս ճարտարապետ, ՈՄԱ գումարտակի կազմում 44-օրյա պատերազմի մասնակից (Քարվաճառի, Կարմիր Շուկայի, Թաղավարդի առաջնագծերում), փաստավավերագրական երեք ֆիլմի հեղինակ **Դավիթ Ստեփանյանն** է: Ֆիլմերից երկուսը Զորավար Անդրանիկի մասին են:

- Մեր օրերում ֆիլմ՝ Զորավար Անդրանիկի մասի՞ն, ինչպե՞ս «համարձակվեցիք», իշխանությունները չխանգարեցի՞ն:

- Երբ նոյեմբերի 9-ից հետո ՈՄԱ-ականներս գլխահակ, անզոր ու ամոթահար հետ էինք դառնում Արցախից եւ Մոնթեի, Լեոնիդի ու մյուս հերոսների պաստառներին նայելով՝ Վարդենիսի զորանոցում զենքերն էինք հանձնում, մի պահ զգացի կամքի ու հզորության այն ահռելի անդունդը, որը բաժանում էր մեզ առաջին պատերազմի հերոսներից, առավել եւս՝ 100 տարի առաջվա այն հսկաներից, որոնք առանց պետական օժանդակության հանդգնել ու հաջողել են պահել հայրենի տարածքները: Անդրանիկի ու Նժդեհի ժամանակները շատ ավելի ծանր էին, բայց խարսխված էին իրապես հզոր անհատականությունների ուսերին: Եվ եթե Նժդեհի պատմությունը քիչ թե շատ հանրայնացվեց հանրապետականների օրոք, Անդրանիկի պատմությունը, որը շատ ավելի բեկումնային ու մասշտաբային էր, այդպես էլ մնաց միտումնավոր ստվերված: Քարոզչամեքենան աշխատում է նաեւ պետական կամ կուսակցական ալիքներով հանրայնացվող փաստագրական ֆիլմերում, որոնցում համատեքստից կտրած նյութերով ու կեղծ մեկնաբանություններով, միեւնույն ժամանակ արտաքուստ անկողմնակալ երեւալու արհեստավարժ բոլոր ջանքերը ներդնելով, մոլորեցնում են դիտողին՝ առիթը բաց չթողնելով հերթական անգամ «իջեցնելու» հերոսին: Շահան Նաթալին ասում էր. «Անդրանիկ մը երբեք նուազ հերոս մը չէ, քան Քեմալ մը, բայց մեկը, երբ դարձավ ղազի, մյուսին մենք՝ հայերս, զարկինք քարեքար: Անդրանիկը չմեռավ, մենք սպանեցինք զայն»: Ոչ վաղ անցյալից հիշենք, որ հանրապետականները տեղադրեցին Արամի արձանը՝ բացման արարողությունը փոխանցելով արդեն վարչապետ կարգված Նիկոլ Փաշինյանին, որը հայտարարեց, որ շարունակելու է Արամի գործը: Հիշենք նաեւ, որ արձանի բացումից երկու տարի անց Փաշինյանը տեր կանգնեց հայոց զորքի դավադիր, թե իրական, բայց, ամեն դեպքում, պարտությունից հետո կնքած կապիտուլյացիային: Դրանից 102 տարի առաջ հենց Արամն էր, որ չնայած Սարդարապատում կռվող զորքի ըմբոստությանն ու Բաթումի պայմանագիրը մերժելու ժողովրդական բազմահազարանոց ցույցերին, տեր կանգնեց հաղթանակից հետո կնքված կապիտուլյացիային, ինչն այն տարիներից մինչ օրս կրկին հոռջորջվում է իբրեւ ինքնիշխանություն եւ անկախություն ձեռք բերելու հաջողություն:

Եթե Անդրանիկը չստանձներ Բաթումի պայմանագրով թշնամուն հանձնված տարածքների ինքնապաշտպանությունը, իսկ Սյունիքի եւ Արցախի բնակչությունն անսար հանրապետության վարիչների հորդորներին՝ զինաթափ լինելով անցներ Ադրբեջանի կազմի մեջ, ապա Մուդրոսի զինադադարից հետո այդ տարածքները ետ վերադարձնելու համար Դրոն ու Նժդեհը տասնապատիկ անգամ ավելի միջոցների ու զինուժի կարիք կունենային, որի հնարավորությունն ուղղակի չկար: Ավելին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչեւ սովետականանալը Ադրբեջանը սկսեց վայելել նաեւ անգլիացիների հովանավորությունը, Հայաստանի Հանրապետության կողմից վերոհիշյալ գործիչներին Սյունիքն ու Արցախը գրավելու առաջադրանք տալու համար քաղաքական որոշում կայացնելու մասին միտքն անգամ ծիծաղելի է թվում:

Ռեժիմից ռեժիմ իրական պատմությունը կոծկելը, կեղծիքի շղթան անընդհատ իրար փոխանցելը հանգեցրին նրան, որ այսօրվա պարտվողական իշխանավորը վստահ է, որ եթե անգամ մի գյուղի սահմաններով ՀՀ նոր տարածքների անկախություն հռչակի, մի սերնդի հայհոյանք ուտելուց հետո կունենա բոլոր հնարավորությունները՝ հաջորդիվ սեփական արձանի «խոյացմանը» տվյալ գյուղի կենտրոնական հրապարակում՝ համարվելով գյուղի հիմնադիր: Եվ պատահական չէ, որ Փաշինյանն այսօր հպարտանում է պարտությամբ: Թեպետ կինոարտադրությանը չէի առնչվել, եւ մտքովս էլ չէր անցնում՝ երբեւէ անդրադառնալ, բայց հայոց պատմության այդ մեծագույն հերոսի՝ Անդրանիկի նկատմամբ հետեւողականորեն շարունակվող անարդար վերաբերմունքը, ինչը նաեւ մերօրյա բարոյական անկման եւ դրանից բխող ծանր, գոյաբանական վիճակի պատճառներից է, մղեց՝ բարձրաձայնելու ճշմարտության մասին: Ամբողջ գործն արվել է առանց որեւէ դրամական աջակցության, բացառապես մեր (Դավիթ Ստեփանյան, Հարություն Աստվածատրյան, Կարեն Մանջիկյան, Սիրարփի Ենգիբարյան) չարչարանքի եւ ոգեշնչման հաշվին: 5 տարի շարունակ Հայաստանի ազգային արխիվում մանրամասն անցել եմ պատմաբանների հղումներով, բաց թողնված համատեքստերն եմ գտել եւ կտրտված շղթաները միացրել եմ իրար: «Անդրանիկը եւ Հայաստանի Հանրապետության ծնունդը» ֆիլմը 2022-2024թթ. ցուցադրվեց 50-ից ավելի անգամ, տարբեր մարզերում, Երեւանի գլխավոր կինոթատրոններում, ԱՄՆ-ում: 2025-ից արդեն շրջանառության մեջ է շարունակությունը՝ «Հրէ Օղակի Կենտրոնում» ֆիլմը:

- Առջեւում համապետական ընտրություններն են: Մեր ժողովուրդն ինչպե՞ս կողմնորոշվի հայտ ներկայացրած 19 միավորի միջեւ, ըստ Ձեզ:

- Օրվա իշխանություններին լուրջ մրցակից է Սամվել Կարապետյանի թիմը, որը, իբրեւ նոր ուժ, դեռ խմորումների մեջ է, բայց ունի լուրջ ռեսուրս եւ թեզերով բավականին մարտունակ է, հաշվի է առնում լայն զանգվածների սպառողական կարիքները՝ առաջ քաշելով նաեւ «հեշտ ու կուշտ» ապրելու գայթակղությունը: Բայց նաեւ մի շատ կարեւոր շեշտադրում է անում՝ որ կանխելու է ադրբեջանցիների մուտքը Հայաստան: Պատերազմից հետո Ալիեւը ՄԱԿ-ին ուղղված իր պաշտոնական նամակում մանրամասն ներկայացրել է իր այդ ծրագիրը ու նաեւ վերջերս ասաց, որ ոչ թե տանկերով, այլ ավտոմեքենաներով են գալու, լցվելու Հայաստան: Բոլոր այն ուժերը, որոնք խուսափում են տվյալ թեման շոշափելուց, վստահելի չեն, քանի որ հենց սրանով է պայմանավորված Հայաստանն ամբողջապես վերացնելու նիկոլաալիեւյան ծրագիրը: Իբրեւ ուղերձ ու գնահատական 35 տարվա նեխած քաղաքական համակարգի՝ լավ կլինի նաեւ, որ մեր ընկերների ստեղծած «Բոլորին դեմ եմ» ինքնալուծարվելիք կուսակցությունն անցողիկ շեմը հաղթահարի: Առհասարակ, ընտրություններով փոփոխությունը լավ տարբերակ չեմ համարում: Նիկոլի բերած աղետը չվավերացնելու եւ երկիրը ճգնաժամից հանելու միակ արժանապատիվ ձեւը համաժողովրդական համախմբումն ու հեղափոխությունն է: Բոլոր ընդդիմադիր ուժերը պետք է միասնական փողոցային համատեղ հարթակ ստեղծեն՝ թե՛ նախընտրական, թե՛ հետընտրական զարգացումներին պատրաստվելով:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ». ՆՈՐ ՍԵՐԻԱԼ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

«Ընտրյալները» սերիալը ժամանակակից կրոնական ժանրի ասպարեզում եզակի գործ կարելի է համարել: Առհասարակ, կրոնական ժանրն այն քիչ ժանրերից է, որը երբեք չի հնանում, եւ կինոռեժիսորները գրեթե միշտ ձգտում են այս ժանրի ֆիլմ նկարահանել, հատկապես՝ քրիստոնեական Սուրբ Գրքի սյուժեներով:

«Ընտրյալները» նախագծի ռեժիսորը Դալաս Ջենքինսն է: Պրեմիերան կայացել է 2019 թվականին, որից հետո այն արագորեն ձեռք է բերել լայն ճանաչում: Ավետարանի ավանդական էկրանավորումներից այն տարբերվում է նրանով, որ առաջարկում է բազմասերիանոց պատմություն, որի առանցքում ոչ միայն Հիսուս Քրիստոսի Անձն է, այլեւ Նրա եւ Նրա աշակերտների ներաշխարհը, Նրա ժամանակակիցներն ու հետեւորդները: Նման մոտեցումները թույլ են տալիս ընդլայնել դրամատուրգիական տարածությունը, խորացնել կերպարների հոգեբանական մշակվածությունը:

Նկատենք, որ Դալաս Ջենքինսը հայտնի քրիստոնեական-բողոքական հեղինակ Ջերի Բ. Ջենքինսի որդին է: Նա նախկինում մի քանի կինոնախագիծ է իրականացրել, բայց լուրջ հաջողություններ չի ունեցել: Եվ, ահա՝ որոշել է ստեղծել Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի մասին պատմող բազմասերիանոց նախագիծ: Սերիալի ֆինանսավորման մեծ մասն ապահովվել է քրաուդֆանդինգի, այսինքն՝ մեծ թվով անձանց կողմից ֆինանսավորման միջոցով, ինչը թույլ է տվել լինել զգալիորեն անկախ, իսկ նախագիծը դարձնել մեդիա առումով հաջողված եւ աշխատող:

Ուշագրավ է նաեւ այն, որ, ի տարբերություն Ավետարանի ավանդական էկրանավորումների, այս նախագիծը տարածվել է հիմնականում ցանցային տարբերակով՝ հատուկ հավելվածների միջոցով եւ ինտերնետ հարթակներով, այլ ոչ թե հեռուստատեսությամբ: Դա ժամանակակից իրականության պայմաններում ապահովել է սերիալի շատ ավելի արագ եւ մեծ լսարանում տարածվելը: «Ընտրյալները»՝ որպես բազմասերիանոց նախագիծ, լիամետրաժ կինոնկարին հատուկ ժամանակային սահմանափակման տակ չի եղել: Բացի այդ, սերիալային տարբերակը թույլ է տալիս կերպարների բնավորությունները բացահայտել աստիճանաբար: Հատուկ ուշադրություն են դարձրել երկրորդական կերպարներին՝ Նիկոդեմոսին, Մատթեոսին, Մարիամ Մագդաղենացուն, առաքյալներին ու աշակերտներին, ավետարանական պատմության մյուս հերոսներին: Որոշ տեսարաններ առհասարակ ուղիղ կապված չեն տեքստի անալոգների հետ, որոնք կան կանոնական Ավետարաններում եւ ներկայացնում են գեղարվեստական մեկնաբանություններ կամ վերակերտումներ:

Հիսուս Քրիստոսի կերպարում հանդես է եկել Ջոնաթան Ռումին: Հիսուս Քրիստոսի նրա կերպավորումը բավականին յուրահատուկ է: Նրա մեկնաբանությամբ՝ Հիսուս Քրիստոսը եւ՛ սակրալ է՝ Աստվածորդի, եւ՛ մարդ՝ ունակ մարդկային ապրումների՝ հումորի, ընկերության, բարեկամական հաղորդակցման, կարեկցանքի: Նման մեկնաբանությունը կերպարն ավելի մոտ ու հարազատ է դարձնում կինոդիտողին, նաեւ՝ ավելի համապատասխանում է ժամանակակից աստվածաբանական-քրիստոսաբանական պատկերացումներին, որտեղ ուշադրություն է դարձվում Հիսուս Քրիստոսի մարդկային բնությանը: Այս ամենով հանդերձ, կա հստակ բալանսավորում Հիսուս Քրիստոսի մարդկային եւ աստվածային էությունների միջեւ: Քարոզները, հրաշագործությունները եւ Նրա երկրային կյանքի մեսիանական ասպեկտները սերիալում շարունակում են լինել առանցքային: Եվ սա պատահական չէ, քանի որ նախագիծը հիմնված է կանոնական նորկտակարանական գրքերի՝ չորս Ավետարանի վրա, որքան էլ սցենարում շատ են հոգեբանական կամ կենցաղային էլեմենտները: Սերիալը հատկապես հետաքրքիր կլինի դիտել նրանց, ովքեր անտարբեր չեն քրիստոնեական կինոարվեստի նկատմամբ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹՈՂ ՀԵՌԱՆԱՆ ՈՒ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՈՒՄ ԱՊՐԵՆ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«Հարեւաններս ասացին, որ Դուք լրագրող եք. կլսեք ինձ՝ բաքվեցի փախստականիս»: Ասացի՝ ինչո՞ւ ոչ: Շարունակեց. «Հարեւաններիս ամեն առիթով բացատրում եմ, թե ովքեր են ՔՊ-ականները, ով է Նիկոլը: Ոմանք նրանց կործանարար էությունը կարծես խորությամբ չեն հասկանում: Ուզում եմ, որ խոսքս տպագրվի,

Այն ժամանակ հայրենիք ունեինք՝ եկանք: Հիմա, երբ տեսնում եմ, որ ադրբեջանական իշխանությունների հետ մերոնք համերաշխ «երգում» են «Արեւմտյան Ադրբեջան» երգը, մտածում եմ՝ այն ժամանակ հայրենիք ունեինք, փախանք փրկվեցինք, եթե սա էլ կորցնենք, հիմա ո՞ւր ենք փախչելու: Ո՞ւր են փախչելու իմ հարեւան նիկոլասերները: Ուզում եմ զգաստացնել մեր ժողովրդին: Միայն խնդրում եմ՝ անունս չգրեք. աղջիկս հազիվ է տեղավորվել դպրոցում, գործից կազատեն: Ես դրանց լավ գիտեմ, կստացվի, որ վնասեցինք մեր դստերը, նաեւ՝ ինքներս մեզ:

Այնքան բան կա ասելու: Սիրտս ուղղակի պայթում է: Ալիեւի եւ Փաշինյանի գործողությունների շղթան ինձ համահունչ է թվում: Վարչապետն իր քայլերով ասես Ալիեւին ասում է՝ «սա քո տարածքն է, ինչ ուզես՝ արա, ինչ ցանկանաս՝ տար»: Այնքան մեծ է վախը, այնպիսի անհասկանալի խոնարհում կա «մեծ թուրքի» առաջ, որ կարող են նվիրել մեզ համար ամենաթանկը: Մենք վերջապես երկի՞ր ենք, թե՞ խանութ կամ կոշկակարի բուդկա:

Զարմանում եմ՝ ոմանք ինչպե՞ս չեն հասկանում, որ այս իշխանությունները մեր երկրի բացահայտ թշնամիներն են: Ես նրանց դավաճան չեմ անվանում՝ թշնամի եմ համարում: Գուցե ծագումով հայ են, բայց իրենց հայ չեն զգում: Նրանք, իմ համոզմամբ, բացահայտորեն լծված են ադրբեջանական սայլին: Եվ զարմանում եմ, որ դեռ կան մարդիկ, որոնք դա չեն տեսնում: Նույնիսկ ոմանք ասում են՝ «մեր խեղճ Նիկոլն ի՞նչ անի, ձեռքից բան չի գալիս»: Ասում եմ՝ եղբայր, հենց դա էլ ես եմ ասում՝ եթե նա խեղճուկրակ է եւ անկարող, ինչո՞ւ է կառչած աթոռից, ինչո՞ւ չի հրաժարվում, որ գա մեկը, որ գոնե կփորձի փրկել այս խեղճ ժողովրդին: Բայց՝ չէ. իշխանությունը քաղցր բան է, ինքնակամ չի հեռանա: Եթե չի հեռանում, ժողովուրդն իր ընտրությամբ պիտի հեռացնի: Այլեւս սխալվելու իրավունք չունենք: Մենք պիտի ազգովի ելնենք ազգային ազատագրական պայքարի: Որքան դիպուկ է ասել Օմար Խայամը. «Եթե ազգը սիրահարված է իր դահճին, նախիրի պես կմորթվի»: Թող բոլորն իմանան՝ թուրքը չի գալիս մեր գլուխը շոյելու: Ես դա իմ մաշկի վրա եմ զգացել: Սկզբում քեզ կխոնարհվի, կքծնի, կբարձրանա քո ուսերին, դու խելոք կանգնած մնաս՝ գլուխդ կկտրի: Ես դեմ չեմ խաղաղ գոյակցությանը, ընդհակառակը՝ խաղաղությունն իմ ու իմ ընտանիքի երազանքն է: Բայց տեսնում եմ՝ մեր հարեւանները խաղաղություն չեն ուզում: Հակառակ դեպքում ինչո՞ւ են ամեն օր նոր պահանջներ ներկայացնում, ինչո՞ւ են ավերում մեր եկեղեցիները, գերեզմանները, մշակութային հուշարձանները: Հայերը Նոյեմբերյանում մինչ այսօր անխաթար պահպանում են այն տունը, որտեղ ծնվել ու մեծացել է Ադրբեջանի վարչապետի տեղակալ Շահին Մուստաֆաեւը:

Իսկ Ալիեւը հայտարարում է, թե Ջերմուկն իրենցն է, թե հայերը շահույթ են ստացել այդ ջրից: Կուզեի, որ մեր գործարար խավը լսեր սա եւ հետեւություններ աներ. Ալիեւի եւ Նիկոլի համագործակցության պայմաններում դուք նույնպես վտանգի տակ եք: Փաշինյանին գովերգելով՝ դուք ընտրում եք ձեր իսկ վախճանը: Ադրբեջանի ախորժակը սահմաններ չի ճանաչում: Նյու Յորքում անցկացված մի ցույցում տեսանք պաստառ, որտեղ գրված էր, թե իբր 1988-2022 թվականներին հայերը «գենոցիդի են ենթարկել» մոտ երկու միլիոն ադրբեջանցու: Ահա այսպիսի կեղծիքներով են արդարացնում իրենց գործողությունները, իրենց ավերածությունները:

Մի պաշտոնյա կա՝ Արսեն Թորոսյան անունով, որը հայի ազգանուն ունի, բայց խոսում է մի լեզվով, որն ինձ օտար է: Նրա հետ հարցազրույցում նույնիսկ հաղորդավար Պետրոս Ղազարյանը չի կարողանում թաքցնել զարմանքը: Ամեն հայ սպասում էր գոնե մի մարդկային, ցավակցող խոսքի, բայց լսում է միայն դատարկ, անշունչ ձեւակերպումներ, որոնք կրկնում են նույն թեզը՝ «ամեն ինչ ավարտված է, Արցախն իրենցն է, իրենց տարածքում ինչ ուզեն՝ կանեն»: Այսինքն՝ թուրքերն ինչ էլ անեն, մենք չպետք է բողոքենք: Արցախն իրենցն է, ինչ ուզեն՝ կանեն: Իսկ մենք պետք է լռենք, նայենք եւ ձեւացնենք, թե «կոնֆլիկտային չենք»: Հիմա էլ խոսում են 300 հազար ադրբեջանցիների վերաբնակեցման մասին «Արեւմտյան Ադրբեջանում»: Այդ դեպքում մեր եկեղեցիները, մեր ներկայությունն են խանգարելու նրանց: Եվ եթե խանգարեն, նորից ասելու ենք՝ «մենք կոնֆլիկտային չենք»: Ասելու ենք՝ եկեք, արեք ինչ ուզում եք, ահա մեր վիզը՝ ոլորեք: Հենց այս պայմանով ենք մենք «Հայաստանի հպարտ քաղաքացիներ»: Սա է մեր արժանապատվությունը: Այսպես ապրել չի լինի: Վերջաբանը մոտենում է. առաջիկայում համապետական ընտրություններն են, որ պատասխան կտան բոլոր հարցերին: Ես տեսնում եմ երեք ուժ, որոնք, իմ կարծիքով, կարող են այս երկիրը դուրս բերել ճիշտ ուղու վրա: Այդ ուժերի առաջնորդներն են՝ Սամվել Կարապետյան, Ռոբերտ Քոչարյան, Գագիկ Ծառուկյան: Արժե ընտրել այս ցանկից առաջինին: Այդ ժամանակ, գուցե, մենք կարողանանք ճանապարհել նիկոլփաշինյաններին, արսենթորոսյաններին ու նրանց նման մարդկանց՝ իրենց սիրելի հարեւան երկիր: Թող այնտեղ ապրեն իրենց ընտրած իրականության մեջ»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 12.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մայիսի 8-ին, ավանդույթի համաձայն, ռուսական առաջատար Հանրային կարծիքի հիմնադրամը եւ Հանրային կարծիքի ուսումնասիրման համառուսաստանյան կենտրոնը պետք է հրապարակեին իրենց ամենշաբաթյա ուսումնասիրությունները՝ իշխանությունների հանդեպ հասարակության վստահության մակարդակի վերաբերյալ: Սակայն երկու կենտրոնն էլ գրեթե միաժամանակ հայտարարեցին, որ նոր տվյալները կհրապարակվեն միայն մայիսի 15-ին: Պաշտոնական պատճառաբանությունը մայիսի 9-ի տոնական օրվա հետ էր կապված: Սակայն, ինչպես գրում է nezigar-ը, իրականությունը մի փոքր այլ է: Բանն այն է, որ հանրային կարծիքի ուսումնասիրություն, ամեն դեպքում, կատարվել է: Պարզապես այս անգամ արդյունքները չեն հրապարակվել: Ու պատճառները մի քանիսն են: Առաջին հերթին՝ վերջինը հրապարակված արդյունքներից երեւում է, որ իշխանությունների հանդեպ վստահությունը նվազում է: Ու դա շարունակական պրոցեսի է վերածվել, թեեւ նվազման տոկոսները փոքր են: Երկրորդ. կա մտադրություն՝ առաջիկա ընտրական փուլին ընդառաջ՝ ուժեղացնել սոցիոլոգիական ուսումնասիրությունների հանդեպ հետաքրքրությունը, հաշվի առնելով, թե սոցիոլոգիան ինչքան կարեւոր քաղաքական գործիք է: Եվ, ի վերջո, Կրեմլի ներքաղաքական կյանքի կուրացիայով զբաղվողները սահմանել են անձամբ Պուտինի համար վարկանիշի անկման սահման, որից ավելի ներքեւ վիճակագրության հրապարակումը նպատակահարմար չեն համարում: Կրեմլում կարծում են, որ երկրում ընդհանուր բացասական, չասելու համար՝ վտանգավոր ֆոն կստեղծվի, եթե անընդհատ հրապարակվի, որ Պուտինի վարկանիշն անկում է գրանցել: Բացի Պուտինից, նվազել է նաեւ վարչապետ Միշուստինի եւ ԱՔ քարտուղար Շոյգուի վարկանիշը: Նրանց դեպքում նույնիսկ քննարկվում է փոխարինման հարցը: Դա իր հերթին կրեմլյան «ուժային» աշտարակին ակտիվացրել է, որ պայքարի մեջ մտնեն ու ավելի շատ լծակներ կարողանան ձեռք գցել՝ կառավարման համակարգում: Որոշումներ՝ այս ամենի հետ կապված, դեռ կայացված չեն: Հատկապես որ Պուտինի գործելաոճն է՝ ամեն բան անել առանց շտապողականության: Համենայնդեպս սպասվում էր, որ մայիսի 15-ին հրապարակվելիք երկու առաջատար սոցկենտրոնների արդյունքները կլինեն մի փոքր ավելի պակաս հոռետեսական եւ կպահեն ընդհանուր կայուն տրամադրությունները երկրի հասարակական եւ քաղաքական կյանքում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am